

«ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ»

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Զովաբեր գյուղ հողամաս
հասցեում նախատեսվող 5000կՎտ դրվածքային հզորության արևային
ֆոտոէլեկտրական կայանի (ԱՖԷԿ) կառուցման և շահագործման
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
/լրամշակված/

<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ> ՍՊԸ տնօրեն՝

Գ. Հախավերդյան

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	էջ 4
2. Հավելվածներ.....	էջ 4
3. Օգտագործվող հապավումներ.....	էջ 5
4. ՇՄԱԳ հաշվետվության կազմման իրավական հիմքերը և փորձաքննության գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն.....	էջ 5-8
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	10
6. Գործընթացի մասնակիցները.....	12
7. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	14
8. Տեղակայման տարածքի բնութագրերը.....	14
9. Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը.....	19
10. Նախատեսվող գործունեության բնութագրերը.....	40
11. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	54
12. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը.....	54
13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....	56
14. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.....	69
15. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան.....	73
16. Մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան.....	84
17. Կառավարման պլան.....	85
18. Փակման փուլ.....	109
19. Հանրային ծանուցում և քննարկումներ.....	110
20. Եզրահանգում.....	111
Գրականություն.....	112
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	

1. Ընդհանուր տեղեկատվություն

ՇՄԱԳ հաշվետվության	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Զովաբեր գյուղ հողամաս հասցեում նախատեսվող 5000կՎտ դրվածքային հզորության արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում
Ձեռնարկող	<<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Հասարթյան փ. 7/4 շ. 2, 0052, Երևան, Հայաստան
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական տարածք
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր
ՇՄԱԳ հաշվետվություն մշակող	«Լիլիթ Ջուռնաչյան»ԱԶ
ՇՄԱԳ հաշվետվության մշակող ընկերության հեռախոս, էլեկտրոնային փոստ	091-31-21-13, 077-31-21-16 zurnachyanz@gmail.com

2. Հավելվածներ

- Տարածքի սեփականության իրավունքի վկայականը
- տարածքի տեղադիրքի վերաբերյալ կոորդինատային տվյալները` WGS-84 (ARMREF- 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով,
- արևային ֆոտոէլեկտրական կայանի (ԱՖԷԿ)-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիան ցանցին միացման տեխնիկական պայմանները` տրված ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից,
- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված ԱՖԷԿ-ի լիցենզիան
- Ճարտարապետահատակագծային առաջադրանք

3. Օգտագործվող հապավումները

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՀՊՏ՝ բնության հատուկ պահպանվող տարածք
ԷՍԼԸՊ՝ էլեկտրականության սանիտարական նորմեր և ընդհանուր պահանջներ
ՏԿ՝ տեխնիկական կանոնակարգ
ԲՄ՝ բաշխիչ սարք
ԲԲՄ՝ բաց բաշխիչ սարք
ՍՊԸ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ԿՎտ՝ կիրվատտ
ԿՎԱ՝ կիրվոլտ-ամպեր
 ՀԷՑ՝ Հայաստանի էլեկտրական
 ցանցերՎտ՝ Վատտ
 ՖՎ՝ ֆոտովոլտային

4. ՇՄԱԳ հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ-110-Ն ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Ուստի ներկայացվող ՇՄԱԳԸ իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքով սահմանված կարգով: Օրենքը կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն: «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ. ՀՕ-121-Ն)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի

պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.)- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը,

կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպարավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործմանարդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական

հիմքերի ապահովումն է:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները: «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» ՀՀ օրենք(2004թ.)- Կարգավորում է ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց փոխհարաբերությունները էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտում գործունեություն իրականացնելիս, մասնավորապես, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական (ազգային, նպատակային) ծրագրերի մշակումը, ընդունումը և իրականացումը, էներգակիրների արդյունավետ օգտագործման ուղղությամբ պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ տնտեսության զարգացման պետական ծրագրերում, համայնքների զարգացման քառամյա ծրագրերում, ինչպես նաև 50 և ավելի տոկոս պետական բաժնեմասով ընկերությունների զարգացման ծրագրերում էներգախնայողության պահանջների ընդգրկումը, սեփական վերականգնվող էներգետիկ ռեսուրսների առաջնահերթ ու արդյունավետ օգտագործման խթանման տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակման ու կիրառման ապահովումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, էներգախնայողության ծրագրերում և վերականգնվող էներգետիկայի ոլորտում միջազգային համագործակցությանն աջակցումը:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

- ՀՀ «Ջրային օրենսգիրքը»,
- ՀՀ Սևանա լճի մասին Օրենք,

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշում՝ «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին»:
- ❖ ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում՝ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
ԱՖԷԿ-ի միացումը ցանցին համապատասխանեցվում է ՀԷՑ-ի կողմից կիրառվող տեխնիկական, նախագծման ու շահագործման չափանիշներին ու հետևյալ ստանդարտներին՝
- ❖ • ՀՀ կառավարության որոշում N 1933-N, 2006թ. "Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ" տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
- ❖ • ՀՀ կառավարության որոշում N 1033-N, 2008թ. "Էլեկտրական բաշխիչ սարքերին և ենթակայանների սարքվածքին ներկայացվող պահանջներ" տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
- ❖ • ՀՀ կառավարության որոշում N 1943-N, 2006թ. "Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ" տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
- ❖ • ՀՀ կառավարության որոշում N 1922-N, 2006թ. "1000Վ-ից բարձր լարման փոխարկման էլեկտրական ապարատներին ներկայացվող անվտանգության պահանջներ" տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
- ❖ • ՀՀ կառավարության որոշում N961-N, 2007թ. "Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ" տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին
- ❖ • ՀՀ կառավարության որոշում N 1605-N, 2007թ. "Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ" տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին ԳՌՍՏ 13109-97 "Ընդհանուր օգտագործման էներգահամակարգերում էլեկտրաէներգիայի

որակի ստանդարտներ":

- ❖ Նախագծման համար հիմք է ընդունվել էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող պահանջները՝ ՇՆուԿ 3.05.06-85 "Արևային լուսաէլեկտրական կայանքների միացումը էլեկտրաէներգետիկական համակարգի ընդհանուր նշանակության էլեկտրական ցանցին" ՀՍՏ 335-2011 և ՍՄՅ կանոնակարգող փաստաթղթերի դրույթները: Հաշվի է առնվել նաև ՀՀՇՆ II-7.01-2011 "Շինարարական կլիմայաբանություն" տեղեկագիրքը:
- ❖ Տեղանքի ուսումնասիրության համար իրականացվել է տեղագրական և երկրաբանական հետազոտություններ և չափումներ: Հետազոտությունների արդյունքները հաշվի են առնվել հողային աշխատանքների պլանավորման, կրող հենակառուցվածքի կառուցման, բետոնային հիմքերի շինարարության իրականացման և ֆոտովոլտային խմբերի տեղաբախշման լուծումներում:
 - ❖ ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,
- ❖ ՀՀ կառավարության 18 մայիսի 2000 թվականի 1000 Վ Ո ԼՏ և բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնները հաստատելու մասին N 249 որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2006 թվականի «Էլեկտրակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 25 հուլիսի 2019 թվականի «ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն և 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 947-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 18 հունվարի 2007 թվականի «Սևան» Ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N 205-Ն որոշում:

5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

2023 թվականի մայիսի 3-ին ընդունվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները) Օրենքը: Արևային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվել և ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) փոփոխված տարբերակի սահմանված կարգով:

Համաձայն այս օրենքի, գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա, Բ: Արևային կայանի հետ կապված գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: ՇՄԱԳ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը (ՇՄԱԳ հաշվետվություն) կազմվել է Օրենքի դրույթների համապատասխան:

Համաձայն 2005թ. հոկտեմբերի 24-ի «Տեխնիկական անվտանգության ապահովման Պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի «Նախքան արտադրական վտանգավոր օբյեկտի գործարկումը (վերագործարկումը) փորձագիտական եզրակացությամբ պետք է հավաստված լինի օբյեկտի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին»:

Նշված եզրակացությունը Օրենքով սահմանված կարգով կստացվի մինչև գործունեության իրականացումը:

6. Զեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը, գործընթացի

մասնակիցները

<<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊ ընկերության իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Հասրաթյան փ. 7/4 շ. 2, 0052, ՀՎՀՀ 08623364:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024թ. փետրվարի 14-ի, 39-Ա որոշման համաձայն՝ ընկերությանը տրամադրվել է 5ՄՎտ դրվածքային հզորությամբ ԼԷ№0765 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2046թ. փետրվարի 15-ը գործողության ժամկետով: Այն տեղակայվելու է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում <<Նավիգ Գրուպ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է համապատասխան օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջների, անհրաժեշտ թույլտվությունների և / կամ համաձայնությունների հիման վրա, ապահովելով բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների, ինչպես նաև առողջության և անվտանգության պահանջների պահպանումը:

Շրջակա միջավայրի նախարարություն

Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:

ՇՄՆ իրականացնում է գործառույթներ առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից, գործընթացում ներգրավվում են նաև ՇՄՆ-ի առանձնացված ստորաբաժանումները:

Առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Նախարարության կարևորագույն գործառույթներից են նաև.

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների պահպանման ու զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, մրցունակության ապահովման, հասարակական առաջընթացի և երկրի անվտանգության բացառիկ կարևոր գործոն.

- մշակույթի զարգացմանը նպաստելը.

- մշակութային ժառանգության ստեղծմանը, պահպանությանը,

պաշտպանությանը, ուսումնասիրությանը, օգտագործմանը, հանրահռչակմանը նպաստելը:

Նախարարությունը գործընթացին կարող է մասնակցել նախատեսվող գործունեության տարածքում պատմամշակութային արժեքների կամ հնագիտական շերտերի առկայության կամ հայտնաբերման դեպքում:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն Նախարարությունը մշակում և իրականացնում է նաև ՀՀ

կառավարության քաղաքականությունը, էներգետիկայի եւ բնական պաշարների կառավարման բնագավառում:

Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Արտակարգ իրավիճակների նախարարություն. Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի N 740-Լ որոշմամբ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի, ՀՀ կառավարության 1325-Ն որոշման Սևան խոշորացված համայնքի Ձովաբեր բնակավայրում իրականացվելու են երկու փուլով հանրային քննարկումներ, որոնցից մեկն արդեն իրականացվել են և հանրությունը միաձայն ողջունել է նախատեսվող գործունեությանը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)

Սահմանում է արևային կայանի շինարարության և շահագործման պայմանները՝ ամրագրվում են էներգիայի արտադրության լիցենզիայով: Ըստ ՀՀ օրենսդրության՝ ՀԾԿՀ էներգիա արտադրող կազմակերպությանը տրամադրում է էներգիայի արտադրության լիցենզիա համաձայն ՀԾԿՀ 1.11.2013 թ. N374 որոշման:

«ՀԷՑ» ՓԲ ընկերություն

Ձեռնարկողին է տրամադրում էլեկտրաէներգիայի արտադրությանն էլեկտրամատակարարման տեխնիկական պայման, որի հիման վրա իրականացվելու է գործունեությունը:

7. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1մ² հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կվտժ/մ², իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կվտժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով):

Նախատեսվող արևային կայանի նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է: <<ՆԱՎԻԳ ԳԲՈՒՊ>> ՍՊ ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքը երկարաժամկետ ժամանակահատվածում: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում

ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա:


8.Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Կայանը տեղակայված է լինելու <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում: ԱՖԷԿ-ի զբաղցրած տարածքը 5,85ՀԱ է:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Արևային կայանի տեղաբաշխման վայրը որոշված է հողատարածքի սեփականատիրոջ որոշմամբ, հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները, ընկերության զարգացման պլանները, տեղանքում առկա ենթակառուցվածքները, մասնավորապես հարևանությամբ գտնվող բարձր լարման էլեկտրական հաղորդալարերը:




Նախագծված արևային ֆոտոէլեկտրական կայանը (ԱՖԷԿ) կառուցվելու է ՀՀ, Գեղարքունիքի մարզի, Սևան համայնքի Զովաբեր գյուղում: Տեղանքը գտնվում է հյուսիսային լայնության Ծովի մակերևույթից 1780մ բարձրության վրա: Տեղանքը Սևանա լճից 15,3կմ, իսկ Զովաբեր գյուղից մոտ 250մ հեռավորության վրա է:


Արևային կայանի իրավիճակային հատակագիծը՝




Մալուխային գծի իրավիճակային հատակագիծը՝



004-2024-ՄԳ-2			Թիւրք	Թիւրքեր
22 Գեղարքունիքի մարզ, Մանս համայնք, Ջովաթր գյուղ հողամաս հասցեում «ԱՆՎՊԳ ՆԻՊՈՒ» ՄԳ ընկերության համար 5000կԿտ զբաղեցրած հերթության արևային կայանի կառուցում			1	1
Հարտարարելու	Ազգանուն	Ստորագր.	 35կՎ մարտիային գծի հատակագիծ արբանյակային լուսապատկերում	
Նախագիծ	Ավագան			
Ստուգից	Բարիտուարբան			





Ռելիեֆը հարթ է, տեղ-տեղ՝ բլրակային: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը՝ 1780մ իրենց ազդեցությունն են թողնում նաև տեղանքի ջերմաստիճանային ռեժիմի վրա:

Սևանա լճի ավազանի տարածքում տեղումները տատանվում են 388 մմ-ից (Օռվակ) մինչև 875 մմ-ի միջև(Եռաթմբեր): Տարվա ընթացքում տեղումների ամենաշատ քանակը դիտվում է գարնանը՝ մասնավորապես մայիս ամսին, իսկ ամենաքիչ տեղումները դիտվում են ձմռանը: Գարնանային տեղումները կազմում են ողջ տարեկան տեղումների 40-45%-ը, այն դեպքում երբ ձմռանը թափվող տեղումներին բաժին է ընկնում 10-15%-ը:

Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Չոլպար բնակավայրից գտնվում է մոտ 250մ հեռավորության վրա, իսկ Սևանա լճից՝ 15,3կմ:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են գրունտային ջրերը և քաղցրահամ ջրի աղբյուրները, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Սևանի լիճն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է մոտ 15,3կմ հեռավորության վրա:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմամշակութային հուշարձաններ: Գործունեության տարածքին ամենամոտը գտնվում է բնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ԱՊ-ն՝ մոտ 15կմ հեռավորության վրա:

Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, որի հեռավորությունը նախատեսվող գործունեության վայրից կազմում է մոտ 320մ:

Հարակից տարածքները արոտավայրեր և գյուղատնտեսական մշակովի

ցանքատարածություններ են, վերջիններս 25 տարի և ավելի չեն մշակվում, դրանք էրոզացված, գերարածեցված և բուսազրկված հողեր են:

Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ վերջինից 650-800մ երկարությամբ գրունտային ճանապարհով:

Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված անտառային գորշ հողերը, տարածված է տարախոտային բուսականությունը:

Գործունեության ենթակա տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով:

Տարածքի երկրաբանական կոռուցվածքը: **Գեոմորֆոլոգիական տեսակետից** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում Հայաստանի Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում: Գյուղը տարածված է Փամբակի լեռնաշղթայի հարավարևմտյան բազուկների ստորոտում, Հրազդան գետի վերին հոսանքի աջ ու ձախ ափերին: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1890 մ բարձրության վրա:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ: Այս ապարների արտաքին Շերտերը հիմնականում ծածկված են էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից Հիդրոերկրաբանական տեսակետից Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Ելնելով դրանից, նախատեսվող գործունեության տարածքը կարելի է գնահատել, որպես գրունտային ջրերի սնման, կուտակման և բեռնաթափման շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լճի մեջ: Տեղամասում ըստ բացված շուրֆերի ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 5մ ավելի խորը հորիզոններում :

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ:

Համաձայն UNDP-ի Հայաստանում աղետների ռիսկի գնահատման իրավիճակի ուսումնասիրության՝ ներկայացվում է Հայաստանում 20 ակտիվ սողանքային տարածքների ուսումնասիրություններ: Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են սողանքային երևույթները:

Տարածքի երկրաբանալիթոլոգիական կտրվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է բացված փոսորակի միջոցով, ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երեք շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1

Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցնումով: Շերտի հզորությունը 0.0-0.40մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (9^ա) I կարգ:


Շերտ 2


Ավազակավեր խճի , մանրախճի պարունակությամբ 15-25%, շագանակագույն, թույլ խոնավ, կիսապինդ թանձրությամբ: Դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Շերտի հզորությունը 0.40-1.50մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (33^գ) III կարգ է:

Շերտ 3


Մանրախճային գրունտ ավազակավի լցնումով -15-25%, մեծ բեկորների պարունակությամբ 10-15%: Լցնումը բաց շագանակագույն է, թույլ խոնավ և պինդ թանձրության: Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Շերտի հզորությունը 1.50-3.50մ է: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն (13) IV կարգ :

Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը
		1
Գրունտների անվանումները		Ավազակավ
Ծավալային խտությունը S/m^3	ρ	1,72
Տեսակարար խտությունը q/m^3	ρ	2,74
Տեսակարար շաղկապվածությունը, ԿՊա	C	1,45
Ծակոտկենություն	e	0.730
Ներքին շփման անկյուն, աստ.	φ	19° 20'
Ձևախախտման մոդուլը, ՄՊա	E	19,6
Գրունտի հաշվարկային դիմադրությունը kq/m^2	R_0	2,0
Ընկրկելության գործակից u/m^3	k_h	2500
Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ըստ	աղ. 1	III (33 ⁹)
Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ 20.04.2020		III





Գլոբալ հորիզոնական ճառագայթումը Հայաստանի Հանրապետությունում: Նկար 2



Կլիմա: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, իրենց կնիքն են թողնում նաև տեղանքի ջերմաստիճանային ռեժիմի վրա: Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը, ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության:

Ստորև ներկայացվում է կլիմայական հարաչափեր «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերը»-ի համաձայն՝

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈԱՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23. Սևան լճային	-5.3	-5.0	-1.7	4.0	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9
49. Սևան քաղաք	-8.2	-7.4	-3.3	3.5	8.8	12.1	15.7	15.7	12.2	6.4	0.6	-5.5	4.2	-33	32

Աղյուսակ 3 Օդի միջին առավելագույն (մ. ա.) և միջին նվազագույն (մ. ն.) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	մ. ա. / մ. ն.	ըստ ամիսների, °C													ընկ.
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	
23. Սևան լճային	մ. ա.	-1.8	-1.0	2.9	9.4	14.3	18.4	20.8	21.1	18.6	13.2	6.4	0.6	10.2	
	մ. ն.	-7.8	-8.0	-4.5	0.7	5.2	9.5	13.0	13.0	9.4	4.5	-0.7	-5.3	2.4	

Աղյուսակ 4 Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
23. Սևան լճային	ա	9.3	8.7	17.2	23.8	24.5	30.0	31.9	32.9	30.0	25.6	20.5	13.1	32.9
	ն	-24.8	-32.5	-27.6	-14.5	-4.8	-0.1	1.4	5.1	-1.0	-8.7	-15.0	-16.6	-32.5

Աղյուսակ 7 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Սևան լճային										
67. Դեկտեմբեր	0.2	3								
68. Հունվար	1.0	11	0.1	4						
69. Փետրվար	2.5	19	1.0	14	0.1	6	0.03	2		

Աղյուսակ 8 Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8
Սևան լճային								
67. Հունիս	0.9	8	0.02	1				
68. Հուլիս	3.3	18	0.2	4				
69. Օգոստոս	4.3	18	0.3	4				

Աղյուսակ 9 Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (C)

(առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն. մ.)

Բնակավայրի անվանումը	ա.մ. / ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

23.Սևան լճային	ա.մ.	3.1	4.0	9.0	15.5	19.9	23.7	26.2	26.6	24.8	19.4	12.5	6.4	27.8
	ն. մ.	-14.1	-14.9	-12.8	-5.6	0.5	5.0	8.8	9.3	4.6	-0.9	-6.9	-11.6	-16.8

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
23.Սևան լճային	74	74	73	72	73	73	74	72	71	69	70	73	72	74	65	72	63

Աղյուսակ 11 Օդի հարաբերական խոնավությունը (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
35.Սևան քաղաք	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	81	75	70	53

ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23.Սևան լճային	18	24	38	64	89	78	54	37	33	47	31	18	531	129	402
	22	23	37	30	43	41	43	52	37	36	31	16	52		
49.Սևան քաղաք	25	30	40	65	103	79	50	40	37	51	38	25	583	158	425
	21	26	26	52	46	45	43	74	44	59	50	26	74		

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
58.Սևան լճային	71	121	-	-

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Մարտի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	
		Միջին արագությունը, մ/վ														ըստ ուղղությունների
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
29.Սևան քաղաք	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4.2	Արլ	3.2	Արմ	5.4
		4.1	4.0	3.3	2.7	2.9	5.3	5.4	3.7						
	ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3.3				
		3.9	3.7	3.2	2.5	3.8	6.3	5.5	3.4						
	հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3.1				
		4.7	4.1	3.2	2.7	2.1	2.5	3.1	2.8						
հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2.7					
	4.0	3.8	2.7	2.2	2.3	5.3	4.3	2.7							

Աղյուսակ 16 Քամու հաշվարկային արագությունը

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
1	2	3	4	5	6	7
23.Սևան լճային	807. 8	3.6	36	24	26	28

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 Ձյան ծածկույթ (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
59.Սևան քաղաք	93	136	252	114

ԱՐԵՎԱՓԱՅԼ ԵՎ ԱՐԵԳԱԿՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 28 Արևափայլի տևողություն (ժ) և առանց արևի օրերի քանակ (օր)

Բնակավայրի անվանումը	Տևողություն	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
24.Սևան լճային	ժ	149	154	189	197	253	305	330	316	274	217	170	143	2697
	օր	3	3	2	2	1	0.2	0.1	0.1	0.2	1	2	3	18

9.Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

Սոցիալ-տնտեսական:Նախատեսվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի վարչական տարածքում:

Խոշոր մորֆոլոգիական միավոր են համարվում Գեղամա և Փամբակ լեռնաշղթաները, որոնց ամենաբարձր գագաթներն են համարվում Աժդահակը` 3597,3մ, Սևկատարը 3225,1մ, Սպիտակասարը 3555,7մ, Նազելին 3312 մ, Վիշապասարը 3157,7 մ, Եռակատարը 2589,6 մ, Գեղասարը 3443 մ, Թեժլեռը 3101 մ, Մայմեխը` 3094 մ:

Ջրագրական ցանցը թույլ է զարգացած և ներկայացված է Սևանա լճից սկիզբ առնող Հրազդան գետով և մի շարք սեզոնային բնույթ կրող մանր առուներով:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի տեկտոնահրաբխային լեռնազանգվածների Արագած-Սյունիքի ենթազոնայի Գեղամա լեռնավահանին: Գեղամա լեռներ, հրաբխային լեռնաշղթա Հայկական լեռնաշխարհում` Հայաստանի կենտրոնական հատվածում` Կոտայքի, Գեղարքունիքի, Արարատի մարզերի սահմանագլխին, ձգվում են Սևանա և Արարատյան գոգավորությունների միջև` Հրազդան գետի վերին հոսանքից սկսած գրեթե միջօրեականի ուղղությամբ մինչև Վարդենիսի լեռների արևմտյան ծայրամասը, որին հանգուցվում են Գնդասար գագաթում: Երկարությունը` շուրջ 70 կմ:

Հողային ռեսուրսներ:

Հող, բնական գոյացություն` կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով` ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով:

Հայցվող տարածաշրջանում տարածված են սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերը:

Սևահող կրազերծված խորքային կարբոնատային՝ Այս հողերը տեղակայված են 2400–2600 մ ծ.մ.բ. սահմաններում և տիպիկ են առավել զառիթափ լանջերի, կիրճի անտառածածկ վերին հատվածների, բարձրադիր տափաստանների, սարահարթային խոտհարքների և նախալեռնային շրջանների համար:

Հողի վերին բերրի շերտը որպես կանոն բնութագրվում է սակավահողությամբ: Առավել մեղմաթեք լանջերում այն միջինում 0,15մ է և ծածկված է ենթահողային հորիզոնով, որի հաստությունը տատանվում է բարակից մինչև 0.5մ սահմաններում: Հողերը սև կամ մուգ դարչնագույն-շագանակագույն ավազակավեր են՝ տեղ-տեղ քարքարոտ կամ մանրախճային կազմով և թույլ ստրուկտուրայով:

Հողերը թթվային են՝ կրի ցածր պարունակությամբ կամ կրազերծ: Ենթահողից արմատական ապարներ անցումը ցայտուն է և բնութագրվում է արմատական ապարների հողմահարվածությամբ և թույլ մեխանիկական կազմով կավային կամ քարքարոտ սակավազոր հողերով:

Մարզի խոշոր հիմնախնդիրներն են՝ հողերի դեգրադացումը, էռոզիան, ավիամերձ գոտու անտառների ջրածածկումը: Մարզի հողային ծածկույթի էրոզիայի առավելագույն ցուցանիշները դիտարկվում են արևելյան և հյուսիսային հատվածներում:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գհահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2022թ. հրապարակված տարեկան տեղեկագրում Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տեղեկատվությունը պարունակում է միայն Վարդենիս համայնքը, իսկ մնացած բնակավայրերի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն, որովհետև այնտեղ որևէ գործունեություն իրականացված չէ:

Ջրային ռեսուրսներ: Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Երկարությունը 70կմ է, առավելագույն լայնությունը՝ 55կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 26.8մ է, ամենախորը վայրը՝ 83մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7մ միջին խորություն) և Փոքր Սևանի

(50.9մ):

Սևանա լիճը բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Այն գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: 1978 թվականին ստեղծվում է Սևան ազգային պարկը: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա – Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան – Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թվական):

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են: Մաքրման աշխատանքները շարունակվում են:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Մաքրման կայանների նախատեսումը Սևանա լճի համար խիստանհրաժեշտություն է:


Գործունեության տարածքում ջրային ռեսուրսներ առկա չեն:

Նախատեսվող գործունեության տարածքը Սևանա լճից գտնվում է մոտ 15,3 կմ հեռավորության վրա:

ՀՀ ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն՝ լճի մակերևույթից և տարբեր խորություններից՝ անիոնների և կատիոնների, սնուցող նյութերի և ծանր մետաղների առկայությունը որոշելու համար: Համաձայն կազմակերպության 2022թ. տարեկան տեղեկագրի՝ մայիսին, օգոստոսին և հոկտեմբերին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 16 դիտակետում:




Ներկայացվում է Սևանի ջրավազանի ջրերի որակը 2022թ. -ին:



Համաձայն «Հիդրոոդերոնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքի՝ 2022թ. տարեկան տեղեկագրի՝ Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումների արդյունքների՝ 19%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 50%-ում՝ 3-րդ դաս, 6%-ում՝ 4-րդ դաս, 25%-ում՝ 5-րդ դաս: 2022թ տարեկան տեղեկագրի՝ 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի մակերեսը կազմել է 1277.845կմ², լճի ծավալը՝ 38.0875կմ³, մակարդակը՝ 1900.43մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 9սմ-ով:

Ներկայացվում է Սևանա լճի հիդրոլոգիական ռեժիմը՝ համաձայն Գլխավոր(www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի:



Մեծ Սևանի ջրի որակը 2022 թվականին հիմնականում գնահատվել է 4-րդ («անբավարար» որակ) կամ 5-րդ դաս («վատ» որակ), իսկ Փոքր Սևանինը՝ հիմնականում 4-րդ դաս («անբավարար» որակ), երկու դեպքում էլ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով: Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում կոմունալ- կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ

անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կեղտաջրերն իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:

Սևանա լճի ջրի որակը 2022 թվականին

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Ծափաթաղ, կենտրոնական (մակերևույթից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Ծափաթաղ, կենտրոնական (7մ խորությունից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Ծափաթաղ, կենտրոնական (30մ հորությունից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին, մանգան	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Ծափաթաղ, ավամերձ (մակերևույթից) (115-ՄՄ)	Ամոնիում իոն, բոր, ԸԱԱ	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Սափաթաղ, ափամերձ (7մ խորությունից) (115-ՄՍ)	ԹՔՊ, բոր, ՇԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փիլի, կենտրոնական (մակերևույթից) (118'-ՄՍ)	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փիլի, կենտրոնական (7մ խորությունից) (118'-ՄՍ)	ԹՔՊ, բոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փիլի, կենտրոնական (20մ խորությունից) (118'-ՄՍ)	ԹՔՊ, բոր, ՇԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փիլի, ափամերձ (մակերևույթից) (118-ՄՍ)	ԹՔՊ, բոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	
Փիլի, ափամերձ (7մ խորությունից) (118-ՄՍ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՇԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (մակերևույթից) (119'-ՄՍ)	ԹՔՊ, բոր, ՇԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Արփա, կենտրոնական (7մ խորությունից) (119'-ՄՍ)	ԹՔՊ, բոր, ՇԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Արփա, կենտրոնական (20մ խորությունից) (119'-ՄՄ)	Ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Արփա, կենտրոնական (30մ խորությունից) (119'-ՄՄ)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, մանգան	4-րդ	
Արփա, ափամերձ (մակերևույթից) (119-ՄՄ)	Ամոնիում իոն, մանգան, ՀԱԱ	3-րդ	5-րդ
	Ալյումին	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Արփա, ափամերձ (7մ խորությունից) (119-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Նորասուզ, կենտրոնական (մակերևույթից) (124'-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Նորասուզ, կենտրոնական (7մ խորությունից) (124'-ՄՄ)	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Նորասուզ, կենտրոնական (15մ խորությունից) (124'-ՄՄ)	Ֆոսֆատ իոն	3-րդ	5-րդ
	Լուծված թթվածին	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Նորատուգ, կենտրոնական (30մ խորությունից) (124'-ՄՍ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ	
	Նիտրիտ իոն	5-րդ	
Նորատուգ, ափամերձ (մակերևույթից) (124-ՄՍ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Նորատուգ, ափամերձ (7մ խորությունից) (124-ՄՍ)	ԹՔՊ, բոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Այրիվանք, կենտրոնական (մակերևույթից) (126'-ՓՍ)	ԹՔՊ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Այրիվանք, կենտրոնական (7մ խորությունից) (126'-ՓՍ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Այրիվանք, կենտրոնական (20մ խորությունից) (126'-ՓՍ)	ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Պոպուլացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի պահպանման գոտում:

Վիշապագլուխ ավստրիական/Dracocephalum austriacum



Կատեգորիա EN

Կրիտերիա B 1 ab(i,ii,iii)

Նկարագիր Բազմամյա բույս՝ 30–60 սմ բարձրության:

Հայաստանում հանդիպում է Սևանի (Շորժա, Բաբաջան, Դարա, Արդանիշ) և Գեղամի (Լճաշեն) ֆլորիստիկական շրջաններում:

Ընդհանուր արեալը ընդգրկում է Միջին Եվրոպան, Բալկանյան թերակղզին, Կովկասը, այդ թվում Նախակովկասը, Արևմտյան և Հարավային Անդրկովկասը, ինչպես նաև Անատոլիան:

Պահպանություն. Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 կմ²-ից պակաս է: Գյուղատնտեսական գործունեության արդյունքում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի հավելված 2-ում: CITES-ի հավելվածներում բացակայում է:

Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Սևան» ազգային պարկի տարածքում:

Գայլաթաթ սևանի/*Alchemilla sevagensis*

Կատեգորիա NT

Կրիտերիա B1ab(iii)+2ab(iii)

Նկարագիր Հայաստանի էնդեմիկ է:



Վարդագգինների ընտանքին պատկանող ծածկասերմ բույս:

Գրանցված է Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում:

Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող, մասնատված արեալով տեսակ է, որը համարվում է Հայաստանի էնդեմիկ: Աճում է Լոռու, Ապարանի, Սևանի և Գեղամի ֆլորիստիկական շրջաններում: Տեսակի գոյությանը վտանգ չի սպառնում: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ, CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

Շուշան հայկական/*Lilium armenum*

Կատեգորիա NT

Կրիտերիա B1ab(iii)+2ab(iii)

Նկարագիր մինչև 100-110 սմ բարձրությամբ խոշոր, գեղեցիկ սոխարմատավոր բազմամյա ծաղկաբույս է: Հայկական շուշանը դեկորատիվ տեսակետից մեծ արժեք է ներկայացնում: Այն ունի նաև բուժիչ հատկություն: Պարունակում է ալկալոիդներ: Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է որպես միզամուղ, վերքերը բուժող և հակահոդացավային, տոնուսը բարձրացնող միջոց: Մեծ ուշադրության արժանի մեղրատու բույս է:



Պահպանություն. Վտանգված տեսակ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 500 կմ²-ից Վտանգման սպառնացող վիճակին մոտ գտնվող տեսակ է:

Տարածված է Հյուսիսային Հայաստանի զգալի տարածությունների վրա: Սակայն բարձր արժեք գեղագարդային հատկանիշների շնորհիվ բավական ակտիվ ոչնչացվում է ծաղկեփնջերի համար ինչը կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ տեսակի համար: Տարածման շրջանի մակերեսը 20000 կմ²-ից պակաս է, իսկ բնակության շրջանի մակերեսը՝ 2000 կմ²-ից պակաս: Սպառնալիքի կարգավիճակը, նկատի ունենալով տեսակի համեմատաբար լայն տարածումը և սահմանակից երկրներում (Ղարաբաղ, Հյուսիսարևելյան Անատոլիա) այլ պոպուլյացիաների առկայությունը, սպառնալիքի կարգավիճակը իջեցվել է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված է որպես կրճատվող տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Անմիջապես նախագծվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած բույսեր և կենդանիներ ինչպես նաև դրանց աճելավայրեր կամ ապրելավայրեր չեն արձանագրվել:

Սակայն, արևային կայանի կառուցման նպատակով հատկացվելիք հողերում նախատեսվող աշխատանքների ընթացքում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպատակավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով (հիմք՝ ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշում):

Հատուկ պահպանվող տարածքներ:

Արևային կայանի համար հայցվող տարածքում հետազոտությունը ցույց են տվել, որ.

ա/տարածքը տեղակայված չէ պատմամշակութային հուշարձանների սահմաններում, հատուկ պահպանվող, անտառային, կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում,

բ/այն օգտագործվում է որպես արոտավայր և ամեն տարի գործնականում գերարածեցվում է,

գ/ տարածքում առկա են գորշ կարբոնատային հողեր: Մարզի բնության հատուկ

պահպանվող տարածք է «Սևան» ազգային պարկը՝ 150,1 հազ. հա մակերեսով: Այն գտնվում է շրջակա միջավայրի նախարարության կառավարման ներքո՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գործառնությունների միջոցով: Այն Պարկի տարածքը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի, բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

1) արգելոցային՝ ընդգրկում է «Արտանիշի», «Նորաշենի», «Լիճք-Արգիշի» և «Գիլի» արգելոցները.

2) արգելավայրային՝ ընդգրկում է «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային Նորաշենի» արգելավայրերը.

3) ռեկրեացիոն.

4) տնտեսական:

Գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ից մոտ 15 կմ հեռավորության վրա:

Ազգային պարկի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով՝ Սևանավանքը (9-րդ դ.), Հայրավանքը (9-12-րդ դ.), Վանեվանքը (10-րդ դ.), Նորատուսի բազմաթիվ խաչքարերը և այլն):

«Սևան» Ազգային պարկի տարածքում կան 4՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլի», «Արտանիշի» արգելոցներ և 3՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» և «Նորաշենի» արգելավայրերը:

Հայցվող տարածքին ամենամոտ արգելոցը «Նորաշենի» արգելոցն է, որը գտնվում է մոտ 12.5 կմ հեռավորության վրա:

«Նորաշենի» արգելոցը գտնվում է ազգային պարկի հյուսիսարևմտյան հատվածում և զբաղեցնում է 839 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 341 հա, իսկ ջրայինը՝ 498 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.7 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.9 կմ երկարությամբ և 3.0 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների (մասնավորապես հայկական որորի, քանի որ այն այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունն է) բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը:

Համաձայն Սևանա լճի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն:

Հոդված 10. Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում գործունեության իրականացումը՝

1. Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն:

2. Անմիջական ազդեցության գոտում արգելվում են՝

ա) էկոլոգիապես վնասակար, օրենսդրությամբ սահմանված թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և կեղտաջրեր առաջացնող տեխնոլոգիաների օգտագործումը.

բ) ռադիոակտիվ նյութերի և թափոնների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա

միջավայրի համար վտանգավոր կամ թունավոր այլ նյութերի արտադրությունը, օգտագործումը, պահեստավորումը և տեղադրումը.

զ) հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը.

դ) քարածխի և հեղուկ վառելանյութի բազայի վրա աշխատող 10 մեգավատտից ավելի հզորությամբ ջերմային էներգիայի աղբյուրների գործարկումը:

Նախատեսվող կառուցապատման աշխատանքները թվարկված գործունեությունների և ազդեցությունների հետ ոչ մի առնչություն չունի և Սևանա լճի էկոհամակարգի վրա որևէ վնասակար ազդեցություն չի գործի:

Ըստ ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշման հավելվածի՝ նախագծվող արևային կայանի տարածքում բնության և կենսաբանական հուշարձաններ առկա չեն:

Արևային կայանի կառուցման աշխատանքների համար նախատեսվող գործունեության տարածքում իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ.

ա/տարածքը տեղակայված չէ բնության և պատմամշակութային հուշարձանների սահմաններում, հատուկ պահպանվող, անտառային, կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում:

Պատմամշակութային և բնության հուշարձաններ:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը: ՀՀ Գեղարքունիքի մարզում հաշվառված են հետևյալ բնության հուշարձանները:

Անվանումը	Տեղադիրքը
«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
«Թառ (Կարմիր Կատար)» հրաբուխ	Գեղամա լեռնաշղթայի կենտրոնական-ջրբաժանային հատվածում, Աժդահակ հրաբխից հարավ-արևմուտք Աժդահակ հրաբխին միանում է Կամուրջ հրաբխով:
«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքից մոտ 45 կմ հեռավորության վրա
«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
«Անանուն» հրաբխային Արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ

«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ	
«Հայրավանք» քրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ	
«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա	
«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում	
«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա	
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա	
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա	
«Վանքի աղբյուրների խումբ» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա	
«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին	
«Ենթալպյան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ	
Թառ /Կարմիր Կատար/	Հրաբուխ	Երկրաբանական հուշարձան

Հայցվող տեղամասի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Մոտակա բնության հուշարձանները գտնվում է 3 կմ հեռավորության վրա:

10. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Կայանը տեղակայված է լինելու <<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում:

10.1. Արտադրական հզորություններ.

Նախագծված արևային ֆոտոէլեկտրական կայանը (ԱՖԷԿ) կառուցվելու է ՀՀ, Գեղարքունիքի մարզի, Սևան համայնք, Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում: Տեղանքը գտնվում է ծովի մակերևույթից 1780մ բարձրության վրա: Տեղանքը Սևանա լճից 15,3կմ, իսկ Զովաբեր գյուղից՝ մոտ 250մ հեռավորության վրա է:

Արևային կայանի մաս

Սույն մասով նախատեսվում է իրականացնել Արևային էլեկտրակայանի էլեկտրատեխնիկական մասի, Ճարտարապետա-Շինարարական, Կոնստրուկտորական մասերի նախագիծը: Նախագծում նախատեսվել են իրականացնել փոխակերպիչ սարքերի տեղադրման, հաստատուն և փոփոխական հոսանքի մալուխների մոնտաժման աշխատանքները:

Նախագծում ընտրվել են Sungrow ընկերության կողմից արտադրվող SG350HX տիպի ինվերտորներ: Ինվերտորների տեխնիկական պարամետրերը ներառված են նախագծում: Ինվերտորները 350կՎԱ հզորության են(ինվերտորների ակտիվ հզորությունը 330կՎտ է): Արևային կայանի կառուցման համար նախատեսվել է 16 հատ քանակով ինվերտոր: Ինվերտորները համալրված են իրարից անկախ 12 հատ մաքսիմալ հոսանքի հզորության կարգավորիչ բլոկներով, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է միացնել 2 հատ հաստատուն հոսանքի շղթաներ: Ինվերտորները մոնտաժվում են մետաղական կարկասի վրա:

Արևային կայանի կառուցման համար ընտրվել է 580Վտ հզորության արևային երկկողմանի տեսակի վահանակներ: Նախագծում նախատեսվել են արևային 28 հատ վահանակներից բաղկացած 311 հատ և 42 վահանակներով 30 հատ խմբեր, որոնք միանում են ինվերտորներին հաստատուն հոսանքի մալուխներով: Յուրաքանչյուր ինվերտորին նախատեսվում է միացնել 23 հատ կամ 24 հատ խմբեր:

Հաստատուն հոսանքի մալուխները պղնձյա են, որոնց կտրվածքի մակերեսը $1 \times 6 \text{ մ}^2$ է: Մալուխների միջև կապն իրականացվում է հատուկ MC4 կցորդիչների միջոցով, որոնցով կատարվում է նաև ինվերտորի հետ միացումը: ՀՀ մալուխները սկիզբ առնելով վահանակների խմբերից, մոնտաժվում են մետաղական կարկասով մինչև ինվերտոր:

Ինվերտորների էլքի փոփոխական հոսանքը նախատեսվում է հաղորդել ABBF-1.0 3*240մմ² կտրվածքի մալուխներով, որոնք միանում են տրանսֆորմատորային ենթակայանի 0.8կՎ բաշխիչ կետում: Մալուխների ընտրությունն իրականացվել է ըստ հոսանքի թողունակության, և ստուգվել է հաշվի առնելով լարման անկման 7.5% և լարման կորստի +-5% թույլատրելի շեմը:

Ուժային մալուխների մոնտաժային ուղեգծերը դեպի ուժային 35/0.8կՎ տրանսֆորմատորային ենթակայան իրականացվում է ստորգետնյա տարբերակով: Համաձայն ԷԷՀ ՏԿ-ի IV գլխի 19.2 ենթակետում նշված պահանջների ստորգետնյա հատվածում մալուխագծի տեղադրման խորությունը 0.7մ է: Նշված պահանջները կիրառվել են սույն նախագծում: Մալուխի կորի ներքին շառավիղը պետք է լինի ոչ պակաս, քան մալուխի տրամագծի 15-պատիկը:

Մալուխի համար՝ խրամուղում, նախատեսված է ավազե անկողնու պատրաստում՝ ավազի 100 մմ շերտի վրա փռվում է մալուխը, նորից ծածկվում է 150մմ ավազի շերտով: Մալուխագծի անցումը երկաթգծից իրականացվելու է հողի հորիզոնական հորատումով՝ ռելսերից 2մ խորության վրա՝ համաձայն ՀԿԵ-ի պահանջի: Մալուխային գծի անցկացման համար պահանջվող հողերը հանդիսանում են համայնքային սեփականության հողեր:

Արևային կայանի անվտանգության համար նախագծում նախատեսվում է իրականացնել տարածքի լուսավորության և տեսանկարահանող սարքերով հսկողություն: Լուսավորությունն իրականացվում է 50Վտ Լեդ լուսատուներով, որոնք մոնտաժվում են մետաղական ցանկապատի համար նոր տեղադրվող՝ Ø49մմ տրամագծով, 4մ բարձրության մետաղական հենարանի վրա: Լեդ լուսատուները տեղադրվում են 50մ միջանկյալ քայլով: Լեդ լուսատուների էլեկտրասնուցման համար նախատեսվում է մետաղական ցանկապատով մոնտաժել СИП-4 4x16մմ²/կտրվածքի հաղորդալար, որից 2 ջիղը պետք է օգտագործվի լուսավորության իսկ մյուս 2 ջիղը տեսախցիկների էլեկտրասնուցման համար: Հաղորդալարի էլեկտրասնուցման աղբյուր հանդիսանում է անվտանգության պահակակետը:

Նախագծում նախատեսվում է նաև տեղադրել անվտանգության տեսանկարահանող սարքեր: Տեսախցիկները նախատեսվում են մոնտաժել ցանկապատի վրա տեղադրվող Ø49մմ մետաղական խողովակի

Նախագծով նախատեսվել է իրականացնել արևային կայանի մետաղական կարկասի մոնտաժումը՝ բետոնե հիմքերի տեղադրմամբ, Արտաքին մետաղական ցանկապատի իրականացումը և մետաղական կարկասի հողանցումները:

Արևային կայանի արևային վահանակների մոնտաժման համար նախատեսվում է տեղադրել մետաղական կարկասից պատրաստված լրակազմ խմբեր: Ընդհանուր թվով նախատեսվում է տեղադրել 311 հատ 28 վահանակով և 30 հատ 42 վահանակով մետաղական կարկասի խմբեր: Մետաղական կարկասը մոնտաժվում է նոր տեղադրվող բետոնե սյունային տիպի հիմքերի վրա: Յուրաքանչյուր խմբում առկա են 10 հատ և 14 հատ բետոնե սյունային հիմքեր :

Բետոնե սյուները 1000մմ բարձրության են, որից 800մմ տեղակայվում է գրունտում, իսկ 200մմ արտաքին է փոսորակների թիվը 3530 հատ է:

Բետոնե հիմքերի համար նախատեսվում է հորատել 1.1մ խորության Ø300մմ տրամագծով փոսորակներ՝ ընդհանուր թվով 3530 հատ: IV կարգի բնահողի հորատելուց հետո նախատեսվում է փոսորակում լցնել 100մմ խճային շերտ, այնուհետև, մետաղական սյան(PS-1) տեղադրելուց

հետո, անհրաժեշտ է լցնել B15 դասի բետոն: Նախատեսվում է բետոնի հիմքը գետնից բարձրացնել 200մմ:

Բետոնե հիմքերի բաց մասերում նախատեսվում է իրականացնել հիդրոմեկուսացում 2 տակ շերտով: 1 խմբում առկա հետևի և դիմացի բետոնային հիմքերի ուղղաձիգ՝ միջանկյալ հեռավորությունը 2030մմ է: Հետևի և դիմացի ոտքերի հորիզոնական ուղեգծում միմյանց նկատմամբ միջակայքը 3600մմ է: Մետաղական կարկասը բաղկացած է տարրատեսակ հանգույցներից: Մետաղական կարկասի դիմացի ոտքի սյան բարձրությունը՝ հաշված բետոնային հիմքից 1300մմ է(PL-1), իսկ հետևի ոտքի սյան բարձրությունը՝ 2255մմ(PL-2): Հետևի սյան և դիմացի սյան միջև տեղադրվում է ամրակցող կապ(Sp-1) և մետաղական պրոֆիլ (Dg-1) վահանակների ձգման համար: Մետաղական կարկասի դիմացի, ինչպես նաև հետևի ոտքերի սյուները հորիզոնականով միմյանց կապակցվում են Mb-1, Mb-2, Mb-3 մետաղական պրոֆիլներով: Լրացուցիչ ամրակցման համար հետևի 1-2 և 4-5 ոտքերի սյուները միմյանց ամրակցվում են Bs-1 մետաղական կապով: Ինվերտորների և փոփոխական հոսանքի ավտոմատ անջատիչի մոնտաժման համար մետաղական կարկասի 2րդ ոտքի սյան և նոր տեղադրվող Pl-3i(ինվերտորի սյան) սյան միջև մոնտաժվում են RL-1 հորիզոնական մետաղական պրոֆիլներ:

Արևային կայանի հողանցումն իրականացվում է իրարից անկախ 7 հատ նոր կառուցվող հողանցման կոնտուրներով: Հողանցման կոնտուրները բաղկացած են 10 հատ L=2000մ 50x50x5մ ուղղահայաց տեղադրվող անկյունակներով, որոնք իրար կապակցվում են 40x4մմ հողանցման շերտապողպատով:

Հուսալի հողանցման համակարգ ստանալու համար նախատեսվում է արևային կայանի յուրաքանչյուր արևային վահանակների շարքում տեղ գտած խմբերը, ինչպես նաև բոլոր շարքերը միմյանց կապել հողանցման շերտապողպատով:

Մետաղական ցանկապատն իրականացվում է 2.5մ քայլով Ø49x2մմ 3մ չափով մետաղական խողովակների տեղադրումով: Ցանկապատի ընդհանուր երկարությունը կազմում է 1604մ: Ցանկապատի բարձրությունը 2 մ է: Լուսավորության և անվտանգության տեսախցիկների մոնտաժման համար յուրաքանչյուր 13-րդ սյան համար նախատեսվել է տեղադրել Ø49x2մմ՝ 4մ երկարության Խողովակ: Մետաղական խողովակները տեղադրվում են բետոնե հիմքերի մեջ: Բետոնե հիմքերի համար նախատեսվում է հորատել 1.0մ խորության Ø200մմ տրամագծով փոսորակներ՝ ընդհանուր թվով 652 հատ: IV կարգի բնահողի հորատելուց հետո նախատեսվում է փոսորակում լցնել 200մմ խճային շերտ, այնուհետև, մետաղական խողովակի տեղադրելուց հետո,

անհրաժեշտ է լցնել B15 դասի բետոն: Նախատեսվում է բետոնի հիմքը գետնից բարձրացնել 100մմ:

Բետոնե հիմքերի բաց մասերում նախատեսվում է իրականացնել հիդրոմեկուսացում 2 տակ շերտով:

Մետաղական խողովակների տեղադրումից հետո նախատեսվում է մոնտաժել մետաղական 3D ցանկապատը: Ցանկապատները միաձև 2,5մ երկարության են, որոնք միմյանց մոնտաժվում են ամրակցիչներով: Ամրակցիչները ձգվում են մետաղական խողովակներին:

Արևային վահանակների տեղադրման համար նախատեսված է մետաղական ցինկապատ կարկաս: Կարկասը նախատեսված է երկկողմանի տիպի պանելների տեղադրման համար: Արևային վահանակների կրող կառուցվածքը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

1. Առջևի սյուն PL-1,
2. Հետևի սյուն PL-2,
3. Առջևի և հետևի սյուների հիմքի կրող բաղադրիչ PS1,
4. Առջևի և հետևի սյուների ամրագրման պրոֆիլը Sp1,
5. Bs-1 հետևի բևեռների ամրագրման պրոֆիլը,
6. Առջևի և հետևի բևեռների միացնող պրոֆիլը MB-1, MB-2, MB-3,
7. Առջևի և հետևի բևեռների միացման պրոֆիլի վրա պրոֆիլի ձգում - Dg-1,
8. Uc-1 առջևի և հետևի բևեռների միացնող պրոֆիլի կցորդներում ամրագրող բաղադրիչ,
9. RL-1 ինվերտորների կասեցման պրոֆիլը:

Մետաղական շրջանակը ամրացված է բետոնե հիմքերի վրա: Շրջանակի տեղադրման անկյունը 30° է:

Շրջանակը տեղադրվում է հետևյալ հետևանքով.

1. Ps-1 տիպի կրող բաղադրիչը սեղմված է կոնկրետ հիմքի վրա,
2. Առջևի PL-1 և հետևի PL-2 սյուները սեղմված են PS-1 բաղադրիչի վրա,
3. Sp1 ամրագրող պրոֆիլի և MB-1, MB-2, MB-3 միացնող պրոֆիլների տեղադրում,
4. Bs-1 պրոֆիլի տեղադրում հետևի բևեռների միջև,
5. Dg-1 պրոֆիլը վահանակների մոնտաժման համար խստացված են,
6. RL-1 տիպի պրոֆիլները ինվերտորների մոնտաժման համար խստացված են:

Մետաղական կարկասը հավաքելուց հետո անհրաժեշտ է երկու պտուտակով ամրացնել բոլոր հեղյուսները , ինչպես նաև արևային վահանների վրա ամրացվածները:

Հարկ է նշել, որ արևային վահանների արտադրողը և նախագծման մեջ օգտագործվող սարքավորումների տեսակը կարող են փոփոխվել՝ պահպանելով նախագծում և դրան ներկայացված փաստաթղթերում տրված նվազագույն տեխնիկական պարամետրերն ու պահանջները նախապես համաձայնեցնելով նախագծող կազմակերպության և պատվիրատուի հետ:

35կՎ ենթակայանի տեղադրում

Նախագծի սույն հատորում նախատեսվում է իրականացնել 6400կՎԱ հզորությամբ և 35կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի տեղադրման աշխատանքներ: Տրանսֆորմատորային ենթակայանը բաղկացած է 1 ամբողջական կոնտեյներից, այսինքն՝ ամբողջական հավաքածուի տեսակից: Այն բաղկացած է 35Վ լարման մասից, տրանսֆորմատորային մասից և 0.8կՎ լարման անջատիչներից: Տրանսֆորմատորային ենթակայանի չափերն են՝ 6058x2896x2438մմ: Այն տեղադրված է հատուկ նախագծված բետոնե հարթակի վրա: Տրանսֆորմատորային ենթակայանից յուղի արտանետման յուղի հավաքման կետը և յուղի կուտակիչի հորը նախատեսված են նախագծով: Յուղահավաքը պետք է կառուցված լինի երկաթբետոնե նյութից՝ 1° թեքության անկյան տակ: Յուղի կուտակիչի հորի չափսերն են 2970x2500x1200 մմ, հաշվի է առնվել տրանսֆորմատորային յուղի ծավալի ընտրությունը: Յուղի պահեստավորման բաքը պետք է կառուցված լինի բետոնե պատերից՝ ներսում մետաղական ցանցով: Յուղի պահեստավորման հորի բոլոր պատերի, առաստաղների և հատակի մետաղական ցանցը պետք է կրկնապատկվի: Կառուցված է D=12 մմ ամրացմամբ: Հարթակի բետոնե հիմքի տակ պետք է տեղադրվի 150 մմ հաստությամբ ռելս: Ենթակայանի 35 կՎ մալուխային գիծը պետք է միացվի 35 կՎ լարման փակ անջատիչ պահարանին: Այս մալուխը պետք է տեղադրվի 1,2մ խորությամբ մալուխային խրամուղու մեջ՝ կիրառելով գործող կանոնակարգերին համապատասխան: Հողանցումը պատրաստված է 40X4 հարթ պողպատից՝ 50x50x5 մմ չափսերով, L=1,5 մ երկարությամբ ուղղահայաց էլեկտրոդներով: Հողի դիմադրությունը պետք է լինի 0,4 Օմ: Հողանցման ցանցի կառուցումից հետո անհրաժեշտ է ստուգել հողակցման դիմադրությունը, որը պետք է լինի 0,4 Օմ: Եթե 0,4 Օմ դիմադրություն չի ստացվում, ապա պետք է ավելացնել ուղղահայաց էլեկտրոդների քանակը:

Ստորև ներկայացվում է յուղորսիչի հատկագիծը՝

Մալուխը խրամուղու մեջ տեղադրելուց առաջ փորված խրամուղու մեջ պատրաստվում է 100մմ հաստությամբ ավազե անկողին, այնուհետև տեղադրվում է մալուխը և ծածկվում է 150մմ ավազե շերտով, որից հետո տեղադրվում է ե/բ սալ և խրամուղին լցվում է ավազակոպիճով: Մալուխի անցկացման խորությունը 1մ է:

Ե/բ սալերի դասավորությունը խրամուղում (կախված խրամուղու հիմքի չափերից) կատարվում է համաձայն А5-92 տիպարային նախագծի №А5-92-15 թերթի աղյուսակ №2-ի: ԷԷՀ ՏԿ IV գլխի 19.3 կետի համաձայն, անմիջապես հողում անցկացված մալուխից մինչև շինությունների հիմքերը եղած լուսանցիկ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 0.6մ: Մալուխի թեքման կորի ներքին շառավիղը պետք է լինի ոչ պակաս, քան մալուխի տրամագծի 7.5-ապատիկը:

ԷԷՀ ՏԿ IV գլխի 19.6 կետի համաձայն խողովակաշարերին զուգահեռ մալուխների անցկացման դեպքում նրանց միջև ընդունված են հետևյալ հեռավորությունները. ջրմուղ-կոյուղուց - 0.5մ, գազատարից - 1մ:

Համաձայն ԷԷՀ ՏԿ IV գլխի 19.12 կետի այլ մալուխներ հատելու դեպքում դրանք պետք է առանձնացվեն ոչ պակաս 0.5մ հողի շերտով, այդ հեռավորությունը նեղվածք պայմաններում մինչև 35կՎ մալուխների համար թույլատրվում է նվազեցնել մինչև 0.15մ` պայմանով, որ հատման տեղում գումարած 1մ յուրաքանչյուր կողմից, մալուխներն առանձնացվեն բետոնե սալերով կամ նույն ամրության խողովակներով, ընդ որում կապի մալուխները պետք է գտնվեն ուժային մալուխներից վերև: Իսկ համաձայն 19.13 կետի խողովակաշարեր հատելու դեպքում, դրանց միջև հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 0.5մ, թույլատրվում է այդ հեռավորության նվազեցում մինչև 0.25մ, պայմանով որ հատման տեղում մալուխն անցկացվի խողովակով (յուրաքանչյուր կողմին գումարած 2մ):

Մալուխը միացվում է ջերմամեկուսացվող ծայրային կցորդիչներով:

Սույն նախագծում կիրառվում են Tycos Electronics ֆիրմային կցորդիչներ, սակայն կարելի է օգտագործել նաև այլ արտադրողի կողմից առաջարկվող` նմանատիպ պարամետրեր ունեցող կցորդիչներ:

Օպերատիվ կետ

Արևային կայանի անվտանգության վերահսկողության համար` արևային կայանի հիմնական մուտքի մոտ նախատեսվում է կառուցել պահակակետ: Շենքի չափերը 5մ լայնության և 8մ երկարության են: Շենքը մեկ հարկանի է: Նախատեսվում է անվտանգության սենյակից բացի շենքում նախատեսել նաև պահեստային տարածք, զուգարան, խոհանոց և սերվերային սենյակ: Շենքը կառուցվում է երկաթ-բետոնե կրող կոնստրուկցիաներից պատրաստված հիմքերի վրա, արտաքին պատերը նախատեսվում են կառուցել սենդվիչ պանելներով:

11.Շինարարության փուլում տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ:

Հողային աշխատանքների ծավալները

Էլեկտրամատակարարման մաս

Սույն մասում իրականացվում է ստորև նշյալ հողային աշխատանքները,

- հաստատուն հոսանքի մալուխների,
- Փոփոխական հոսանքի մալուխների,

Հաստատուն հոսանքի մալուխների խրամուղիների ընդհանուր երկարությունը 350մ է: Նախատեսվում է խրամուղիների քանդման աշխատանքներն իրականացնել մեխանիզմով: Խրամուղու քանդման աշխատանքներից գոյանում է 91խմ բնահող, որը կրկին հետլիցք է արվում քանդված խրամուղու մեջ:

Փոփոխական հոսանքի մալուխների խրամուղիների ընդհանուր երկարությունը 0.8կՎ մալուխների համար 1191մ է, իսկ 0.4կՎ մալուխի համար՝ 135մ: Նախատեսվում է խրամուղիների քանդման աշխատանքներն իրականացնել մեխանիզմով: 0.8կՎ մալուխների խրամուղու քանդման աշխատանքներից գոյանում է ընդհանուր 482խմ բնահող, որից 331խմ կրկին հետլիցք է արվում քանդված խրամուղու մեջ: Խրամուղիներում փոփում է 250մմ բարձրության ավազե շերտ, որը կազմում է 151խմ ծավալ: Ավելացված 151խմ բնահողը փոփում է տեղում:

0.4կՎ մալուխի խրամուղու քանդման աշխատանքներից գոյանում է ընդհանուր 35խմ բնահող, որից 24խմ կրկին հետլիցք է արվում քանդված խրամուղու մեջ: Խրամուղում փոփում է 250մմ բարձրության ավազե շերտ, որը կազմում է 11խմ ծավալ: Ավելացված 11խմ քանդված բնահողը փոփում է տեղում:

35կՎ մալուխի խրամուղու քանդման աշխատանքներից գոյանում է ընդհանուր 668խմ բնահող, որից 534խմ կրկին հետլիցք է արվում քանդված խրամուղու մեջ: Խրամուղում փոփում է 250մմ բարձրության ավազե շերտ, որը կազմում է 134խմ ծավալ: Ավելացված 134խմ քանդված բնահողը փոփում է տեղում:

Ճարտարապետա-շինարարական մաս

Սույն մասում իրականացվում է հետևյալ աշխատանքները.

- Արևային կայանի ցանկապատի իրականացում,
- Բետոնե հիմքերի իրականացում,
- Օպերատիվ կետի երկաթբետոնե հիմքի իրականացում:

Արևային կայանի ցանկապատի մոնտաժման համար իրականացվում է մետաղական խողովակների տեղադրում՝ 800մմ խորության հորատանցքում: Ընդհանուր թվով առկա է 648 հատ մետաղական խողովակ:

Արևային կայանի մետաղական կարկասի մոնտաժման համար իրականացվում է բետոնե հիմքերի տեղակայում: Բետոնե հիմքերի համար իրականացվում է 300մմ տրամագծով և 900մմ խորության հորատանցքերի բացում՝ թվով 3530 հատ: Հորատանցքերից գոյացած բնահողը կազմում է 224խմ ծավալ, որը փոփում է տեղում: Բացված հորատանցքերի հիմքում փոփում է 100մ խճային շերտ, որը կազմում է 25խմ ծավալ: Հորատանցքի 800մմ մասը և գետնի մակերեսից 250մմ մասը նախատեսվում է բետոնացնել B20 տիպի բետոնով՝ ընդհանուր 225,6խմ ծավալով:

Արևային կայանի օպերատիվ կառավարման համար կառուցվում է օպերատիվ կառավարման

կետ: Շենքի չափերը 8000x5000մմ են, առաստաղի բարձրությունը 3մ: Շենքը պատրաստվում է սենդվիչ պանելներով՝ մետաղական կոնստրուկցիայով:

Բետոնե հիմքերի համար իրականացվում է Բ15 դասի ե/բ շրջանակ՝ 13խմ բետոնե ծավալով:

Ե/բ շրջանակի մեջ կատարվում է խճային շերտի լիցք 4խմ ծավալով, որի վրա իրականացվելու է ե/բ հատակ՝ 200մմ հաստության: Ե/բ հատակի ընդհանուր ծավալը կազմում է 8խմ Բ15 դասի բետոն:

35կՎ տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում

Արևային կայանի արտադրած էլեկտրաէներգիայի հաղորդաբաշխման համար կառուցվում է 35կՎ տրանսֆորմատորային ենթակայան(ԵԿ):

35կՎ ԵԿ-ի շինարարական աշխատանքները բաժանվում են՝

- 35կՎ լրակազմ ենթակայանի տեղադրում,
- Յուղահավաք բաքի կառուցում:

Տրանսֆորմատորային ենթակայանի համար նախատեսվում է կառուցել յուղահավաք: Յուղահավաքի համար նախատեսվում է քանդել 10խմ ծավալով բնահող: Հանված գրունտը իրականացվում է տեղում հետլիցք և հարթեցում՝ փռելով բետոնե հիմքի կողքերը:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 365 օր՝ ըստ ժամանակացույցի:

12.1 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Շինարարության համար անհրաժեշտ բետոնանյութը բերվելու է պատրաստի պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Սևան համայնքից:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Պայմանագիրը կնքվելու է Կապալառու կազմակերպության կողմից համապատասխան թույլտվությունները ստանալուց հետո՝ շինարարական աշխատանքների սկզբում:

Շինարարության փուլում օգտագործվելու են նաև այլ շինարարական նյութեր՝ ամրան, մետաղ, շինարարական քար, ավազ, ցեմենտ, շեբեն: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Շինարարությունը տևելու է 365 օր, շինարարության ընթացքում աշխատելու են առավելագույնը 11 աշխատակից:

Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է տարածքի հրդեհամարման, ,

տարածքի ջրման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5

մարդ N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 6 մարդ

$N1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 150օր:

$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 6 \times 0.025) \times 365 = 83,9 \text{մ}^3/2\text{ին. ժամ. կամ } 0,0021 \text{մ}^3/\text{օր:}$

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից, ինչպես նաև անվտանգության կանոններից շահագործման փուլում տարածքի ջրցան չի նախատեսվում:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը 8000 մ², (արդիրապարակ 3000քմ, ճանապարհներ 5000քմ)

$K1$ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով՝ 365 (առավելագույնը

150օր) $U1 = 8000 \times 0.0015 \times 365 = 4380 \text{մ}^3/2\text{ին. ժամ:}$

Անիվների վնասում չի նախատեսվում, քանի որ տարածքը գրունտային է:

12.2 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.

Կայանի կառուցման շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ, որոնք կարող են լինել կապալառու կազմակերպության տրանսպորտային միջոցները կամ վարձակալվել այլ կազմակերպություններից:

Գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Շինարարական աշխատանքների համար նախատեսված մեքենաները և տեխնիկական կայանվելու են հարակից ճանապարհի եզրին, աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

13. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը:

ՇՄԱԳ-ի շրջանականերում դիտարկվել է նախատեսվող գործունեության գրոյական, այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

Ջրոյական տարբերակ նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում.

կհանգեցնի առաջին 20 տարվա ընթացքում այլ աղբյուրներից անհրաժեշտ էլեկտրաէներգիայի արտադրմանը: Նշված քանակի էլեկտրաէներգիայի պահանջարկը հնարավոր կլինի ապահովել շրջակա միջավայրի վրա առավել ազդեցություն ունեցող էներգիա արտադրող այլ գործունեությունների շնորհիվ՝ ջերմաէլեկտրակայան, հիդրոէլեկտրակայան և այլն, ինչն իր հերթին կհանգեցնի շրջակա միջավայրի վրա էական ազդեցությունների աճին:

Արևային էլեկտրակայանի միջոցով էլեկտրաէներգիայի ստացումը նպաստելու է օդում ածխաջրածինների կրճատմանը, որոնք արտանետվում են էներգիայի ստացման այլ աղբյուրներից: Ածխաջրածինները նպաստում են կլիմայի փոփոխությանը՝ իր բոլոր վտանգավոր հետևանքներով:

Արևային էլեկտրակայանների ներդրումը էներգետիկ համակարգում համարվում է ամենահեռանկարային այլընտրանքային ճյուղը: Համաձայն միջազգային էներգետիկ գործակալության տեսության 40 տարի հետո արևային էներգետիկան կարտադրի ամբողջ համաշխարհային էներգետիկ պահանջարկի շուրջ 20-25%-ը, ինչն իր հերթին կնպաստի տարեկան հսկայական քանակի ածխաջրածնային գազերի կրճատման:

Տարածքի այլընտրանք: Տարածքն ընտրված է ելնելով արևային էներգետիկայի զարգացման համար նպաստավոր պայմաններից: Աշխարհագրական դիրքը և ծովի մակարդակից ունեցած բարձրությունը, նպաստավոր պայմաններ են ստեղծում արևային էներգետիկայի զարգացման համար: Տարածքը գերաբաժեցված է, գտնվում մարդու ակտիվ գործունեության գոտում: Հողի նպատակային նշանակությունը՝ էներգետիկ ենթակառուցվածքների է:

Ընտրված տարբերակի հիմնավորումը: Նորագույն տեխնոլոգիաների սրընթաց աճի հետ զուգահեռ կարևոր է շրջակա միջավայրի պահպանման գիտակցումը, և այնպիսի առաջադեմ տեխնոլոգիաների կիրառումը, որոնք անվտանգ են շրջակա միջավայրի համար: Արևակայանի կառուցման դեպքում.

- ՀՀ-ում հանրության համար այլընտրանքային էներգիան դառնալու է հասանելի,
- կապահովի բնակչության էներգասպառման հեռանկարային պահանջարկը,
- կհանգեցնի բնակչության կոմունալ բեռի թեթևացմանը, ֆինանսական

միջոցների խնայմանը և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Վերականգնվող էներգետիկ համակարգերը, որոնց թվին են պատկանում արևային էլեկտրակայանները, գործնականում արդեն լայն կիրառում ունեն աշխարհում:

Աշխարհը հիմնված է էներգետիկ պաշարների օգտագործման վրա, որոնք հետզհետե սպառվում են և չեն վերականգնվում: Էներգիայի ստացման այլ մեթոդները վնասում են բնությանը և մարդկանց առողջությանը, միաժամանակ սպառնում երկրի բնական պաշարների նավազեցմանն ու անհետացմանը: Ներկայումս էլեկտրաէներգիայի 70%-ն աշխարհում արտադրվում է հանածո վառելիքների հիման վրա (նավթ, ածուխ, բնական գազ): Ջերմային էներգիայի արտադրությունում հանածո վառելիքների մասնաբաժինը 90% է:

Համաձայն Էներգետիկայի հայկական գործակալության կայք էջի՝ Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ: ԵՎ այս հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետությանը զարգացնել իր տնտեսությունը, նվազեցնելով կախվածությունը ներմուծվող վառելիքից:

Այլընտրանքային էներգիայի աղբյուրների օգտագործումը թույլ է տալիս զգալիորեն նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, ինչպես նաև կրճատում է էներգիայի ստացման ծախսերը: Էներգախնայողությունն էապես կարող է նպաստել և՛ շրջակա միջավայրի, և ամբողջ մոլորակի բնապահպանական խնդիրների լուծմանը: Ներկայիս տեխնոլոգիաները, որոշակի ներդրում կատարելուց հետո, թույլ են տալիս նույնիսկ տնային տնտեսություններում ունենալ սեփական, բնական էներգիայի ստացման աղբյուրներ: Էներգիայի և ռեսուրսների անխնա սպառման հետևանքները գալիք սերունդների համար կարող են ունենալ լուրջ բացասական ազդեցություն, ուստի այլընտրանքային, վերականգնվող այդ թվում արևային էլեկտրաէներգիայի ստացումը բավականին նպաստավոր պայմաններ է ստեղծում, թե շրջակա միջավայրի պահպանման, և թե մարդկության կայուն զարգացման համար:

14. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ)

ՇՄԱԳ շրջանակներում իրականացվել է արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է վեր հանել հնարավոր բոլոր ազդեցությունները, մշակել ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները: Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, վերջինիս վերաբերյալ գոյություն ունեցող գրականությունը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները:

Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Նախատեսվող գործունեության տարածքը ընտրվել է այնպես, որպեսզի նվազագույնի հասցվի շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունը:

Կայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու՝

- Կայանի շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազան

արտանետումների :

- Ջրային և հողային ռեսուրսների օգտագործման:
- Լանդշաֆտի, Կենդանական և Բուսական աշխարհի փոփոխությունների:
- Շինարարական թափոնների, Կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման:
- Արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

14. 1 Շինարարության փուլ: Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ:

14. 1. 1 Օդային ավազան. Գեղարքունիքի մարզն աչքի է ընկնում արևային էներգիայի պոտենցիալով, տարածքը լավագույններից մեկն է արևային էներգիայի տեխնոլոգիաների առումով՝ արեգակնային ֆոտովոլտային տեխնոլոգիաների և արեգակնային ջրատաքացուցիչների կիրառման տեսանկյունից:

Գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան լինելու են արտանետումներ ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Արևային կայանի համար նախատեսված տարածքը մոտ 250մ հեռու է ամենամոտ բնակելի տարածքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կրելու է կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14. 1. 2 Ջրային ռեսուրսներ. Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի մատակարարման պայմանագիրը կկնքվի գործունեության իրականացման շինարարության փուլում՝ համապատասխան լիցենզիա ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ, հստակեցնելով ջրի մատակարարման աղբյուրը:

Համաձայն կատարված ուսումնասիրության՝ նախատեսվող գործունեության տարածքը բնութագրվում է որպես գրունտային ջրերի սնման, կուտակման բեռնաթափման

շրջան: Ստորերկրյա ջրերը բեռնաթափվում են Սևանա լիճ: Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերն ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15-20 մ-ից ցածր հորիզոններում: Գործունեության տարածքում բացակայում են մակերևութային ջրային հոսքերը, իսկ Սևանա լիճը գտնվում մոտ 2020մ-ից ավելի հեռավորության վրա: Ուստի գործունեության իրականացումը չի կարող անմիջական ազդեցություն ունենալ Սևանա լճի վրա:

Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի կատարվելու, քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են:

Կեղտաջրերի հեռացում. Աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի բիոզուգարան, որը կտեղադրվի անվտանգության պահակակետի կողքը: Մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարական և հետագա շահագործման փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու, ուստի արևակայանի շինարարության և շահագործման ընթացքում ջրային ռեսուրսների վրա ազդեցությունները բացակայում են:

Ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլանով:

14. 1. 3 Հողային ռեսուրսներ. Արևային կայանի կառուցման շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի, տրանսֆորմատորի և յուղնդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Հանվող հողային գրունտն օգտագործվելու է հետլիցքի, տեղում հարթեցման, նպատակով: 224,5իւմ գրունտ առաջանում է արևային կայանի բետոնային հիմքերի քանդման աշխատանքներից, իսկ ենթակայանի ու պահակակետի համար 10իւմ, մալուխային գծի կառուցման համար՝ 635իւմ: Ընդամենը՝ 869իւմ, որը հետ է լցվում խրամուղիների մեջ, ավելացված գրունտը փովում է տեղում:

Հողային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական կառավարման պլանով միջոցառումներ:

14. 1. 4 Կենսաբազմազանություն. արևակայանի և ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր են՝ հողատեսքը էներգետիկայի: Տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառաթփային բուսականությունը, առկա է խոտածածկ: Արևային կայանի կառուցման համար նախատեսվող տարածքներում բացակայում են ծառերը թփերը, ուստի ծառերի

հատման անհրաժեշտություն չկա: Ֆինարանների տեղադրման վայրերը համայնքային գյուղնշանակության հողեր են՝ արոտավայրեր, իսկ արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման տարածքը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության հողեր են:

Գործունեության բուն տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, քանի որ գործունեության ենթակա տարածքներն արդեն ենթարկվել են մարդածին ազդեցության:

Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ:

Շինարարության ընթացքում՝

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.1.5 Թափո ն ն ե ռ . շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային ադրի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Գործունեության ընթացքում նախատեսվում է գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինխպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառման իրականացում՝ առաջնորդվելով <<Թափոնների մասին>> օրենքի պահանջներով:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 3-4-րդ դասերին:

Առաջանալու է.

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (ծածկագիր՝ 35131100 01 00 4)՝400կգ, ալյումինե օքսիդ պարունակող շլամ (ծածկագիր՝ 31602700 04 01 3)՝350կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝140կգ թափոնների տեսքով:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)-2մ³:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված ադր՝ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) 4200կգ/տարի քանակով:

Կենցաղային ադրի հաշվարկները.

Կենցաղային ադրի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթավիճակում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի – աշխատողների թիվն է/ըստ ամենաձանրաբեռնված հերթավիճակի/, հետևաբար,

$$M=11*120=1320\text{կգ/տարի}$$

Նախատեսվող գործունեությունը տևելու է 12 ամիս, ուստի կենցաղային աղբի տարեկան քանակը կկազմի.

$$1320*12/12=1320\text{կգ/տարի}$$

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող և բնության հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքներ, արգելավայրերը: Ամենամոտ հատուկ պահպանվող տարածքը

«Սևան» ԱՊ-ն է, որը գտնվում է գործունեության տարածքից մոտ 13,5կմ, արգելավայրեր գտնվում են 7 կմ-ից ավելի հեռավորությունների վրա:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ պատմամշակութային շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

14.1.7 Էկոլոգիապես զգայուն տարածքներ.

Գործունեության վայրը չի առնչվում՝ վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

14.1.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում կապված.

- բնական աղետների(երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ
- օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում, փոթորիկ),
- հրդեհների առաջացման,

- հեղուկ նյութերի արտահոսքի,
- աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Գործունեության ենթակա տարածքում ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներն՝ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ, տվյալ տարածքում բացակայում են:

Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.1.9 Աղմուկ և թրթռում.

Ներկայացվող տեղանքում աղմուկի և տատանումների մակարդակը ցածր է, քանի որ բացակայում են աղմուկ առաջացնող արտադրությունները: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 Սանիտարական նորմերը հաստատելու մասին N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպատություն աղմուկից» Շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 Հրամանում փոփոխություն կատարելու մասին N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ:

Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Նախատեսվող գործունեության տարածքը բնակավայրերից գտնվում է մեծ հեռավորության վրա, ուստի աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակչության վրա: Արևային էլեկտրակայանի շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ Զովաբեր բնակավայրից՝ մոտ 250մ:

Ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը մոտակա բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի

գոտում կազմում է 45 դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Արևային կայանի նախատեսվող տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ շինարարության աշխատանքները, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը:

Արևային կայանի տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = Laէկվ - ՈLAհեռ - ՈLaէկր - ՈLAկանաչ բանաձևով, որտեղ՝ LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ, ՈLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ՈLAհեռ կազմում է 20դԲԱ, ՈLaէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (կայանի տարածք),

ՈLAէկր =10դԲԱ,

ՈLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով,

ՈLAկանաչ=5դԲԱ:

Աղմուկի մակարդակը Զովաբեր գյուղի մոտ կկազմի՝

Laտար = Laէկվ - ՈLAհեռ - ՈLaէկր - ՈLaկանաչ = 65-20-10-5=30դԲԱ (նորման 45դԲԱ):

Գիշերային ժամերին շինարարական աշխատանքներ չեն կատարվելու:

Արևային կայանի կառուցման գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ: Կայանի տարածքում գործարկվող մեքենաներից առաջացող թրթռումները չեն գերազանցելու 85դԲԱ մակարդակը:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

14. 1. 10 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- շինտեխնիկայի շահագործման,

- արտակարգ իրավիճակների առաջացման,
- շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների աշխատանքի անվտանգության և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ, որից խուսափելու համար անհրաժեշտ է աշխատանքի ճիշտ կամակերպում և աշխատանքի ընթացքում անվտանգության պահպանում:

Շինարարական աշխատանքների ընթացքում մարդու առողջության և անվտանգության վրա անմիջական ազդեցությունը կապված է էլեկտրահարման, սանիտարական իրավիճակի և այլ գործոնների հետ:

Շինարարության ամբողջ ընթացքում ապահովվելու է բժշկական միջոցների բավարար քանակը, ջրի և սննդամթերքի որակի, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Կայանի կառուցման փուլում պահպանվելու են մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները:

14. 1. 11 Սոցիալական ազդեցություն. Գործունեությունն իրականացվելու է Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում: Գործունեության իրականացումը բնակիչներից հողային տարածքների ձեռք բերման, հողերի օտարման խնդիրներ չի առաջացնելու: Նոր ենթակառուցվածքներ չեն նախատեսվում, գործունեության վայր մոտենալու համար օգտագործվելու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 11 մարդու համար:

Շինարարական աշխատանքները լինելու են կարճաժամկետ: Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնել մասնակցել համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը, պարբերաբար հանդիպել համայնքի հետ:

14. 1. 12 Լանդշաֆտ. Բարեկարգում.

<<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊ Ընկերության Արևակայանը տեղակայվելու է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր բնակավայրի վարչական տարածքում:

Շինարարության փուլում լանդշաֆտի որոշակի փոփոխություններ կառաջանան պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր:

Կայանի կառուցման արդյունքում տեղի կունենա լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն՝ պայմանավորված տարածքում արևային մոդուլների տեղադրումով: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի չի լինի բնակավայրերից՝ հեռավորության պատճառով: Իսկ ավտոճանապարհներից պատկերների փոփոխությունը էական չի լինի:

14.2 Շահագործման փուլ

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի, անվտանգ շահագործման, ջրային

ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, կենսաբազմազանության փոփոխությունների, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

14.2.1 Օդային ավազան. Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

14.2.2 Ջրային ռեսուրսներ. Շահագործման փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում:

14.2.3 Հողային ռեսուրսներ. Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն չի կանխատեսվում: Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում դադարելու է գերարածեցումը, առաջանալու են ստվերային տարածքներ, առաջանալու է հողի խոնավության նոր ռեժիմ:

14.2.4 Կենսաբազմազանություն. Արևային կայանի կառուցման ենթակա տարածքն անտառածածկ չէ: տարածքում առկա է տարախոտային բուսականությունը:

Շահագործման փուլում՝ Արևային էլեկտրակայանի կառուցման արդյունքում տարածքի մի մասը ծածկվում է արևային մոդուլներով և ստվերվում է հողի զգալի մասը: Արևային էլեկտրակայանի մոդուլները ստվերում են զբաղեցված տարածքի 25-30 տոկոսը: Մնացածը մասնակիորեն է ստվերվում, ընդ որում արևածագին և արևամուտին լուսավորվում է ամբողջովին՝ գտնվելով արևի ուղիղ ճառագայթների տակ: Մասնակիորեն լուսավորված տարածքներում ստեղծվելու է բուսական նոր համակեցություն, որի կազմում տեղ են գտնելու թե՛ տեղաբնիկ ստվերասեր բույսերը, որոնք մինչև այդ հնարավոր է, որ տարածքներում չեն աճել, որոշակիորեն պահպանվելու են նաև բուսատեսակների առկա տեսակային կազմը:

Որոշակի ազդեցություն է թողնելու նաև հողի խոնավության նոր ռեժիմը, որը հետևանք է լինելու մթնոլորտային տեղումներից առաջացող խոնավության անհամաչափ բաշխում Արևային մոդուլներով ծածկված տարածքի տեղումները ցած հոսելով մոդուլների ցածր եզրից՝ բաշխվելու են տարբեր ձևով, սակայն դրանք կենսաբազմազանության առումով էական փոփոխություն չեն կարող առաջացնել:

14.2.5 Թափոններ. Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ: Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների հնարավոր առաջացող թափոններն են.

- Հալոգեններ, դիֆենիլեր և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 15,6տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորներում յուղերի քանակությամբ:

- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4)՝ 0,5մ³ քանակով:
- Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 31401200 01 00 4)՝ 15մ³ քանակով:

• Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3)-12մ³:

• Քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի թափոններ (ծածկագիր՝ 35131100 01 00 4)՝ 10կգ, այլումինե օքսիդ պարունակող շլամ (ծածկագիր՝ 31602700 04 01 3)՝ 10կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 6կգ քանակներով:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.6 Արտակարգ իրավիճակներ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել.

- հնարավոր հրդեհային իրավիճակների,
- կլիմայական և այլ երևույթների (երկրաշարժ, քամի և այլն) դեպքում:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

14.7 Աղմուկ և թրթռում. Շահագործման փուլում որոշակի աղմուկի ավելացում կնկատվի ենթակայանի մոտ, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ

բնակավայրերի վրա:

14.8 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն. արևակայանի, ենթակայանի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն:

14. 9 Սոցիալական. Արևային կայանի կառուցումը նախատեսում է որոշակի սոցիալական ազդեցություններ:

Նախագծի հիմնական սոցիալական ազդեցությունները հետևյալն են՝

- Արոտավայրերի սահմանափակում:
- Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր վնասներ արոտավայրերի ճանապարհին:
- Բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Դրական սոցիալական ազդեցությունները կապված կլինեն տարածքում նոր ծառայությունների և ենթակառուցվածքների ստեղծման և հնարավոր աշխատատեղերի բացման հետ:

Մարզում արևային կայանների հիմնումը կստեղծի աշխատատեղեր սոցիալապես անապահով խավի համար և որոշակիորեն կնպաստի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Շահագործման փուլում մոնիթորինգ իրականացնելու նպատակով ընդգրկվելու են 4- 5 աշխատողներ, որոնք աշխատելու են հերթափոխային գրաֆիկով:

Ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

14. 10 Էլեկտրական և մագնիսական դաշտ: Արևային կայանը նախագծվել է ՀՀ և միջազգային ստանդարտներին համապատասխան:

14.11 Գումարային ազդեցություններ. գործունեության վայրից՝ մոտ 200 մ հեռավորության վրա գտնվում է այլ արևային կայան: Տարածքում այլ արտադրություններ չկան: Գոյություն ունեցող արևային կայանի հետ որևէ գումարային ազդեցություններ չկան:

ՇՄԱԳ հաշվետվությունը ցույց է տալիս, որ նախագիծը շրջակա միջավայրի վրա կունենա ցածր ազդեցություն, եթե իրականացվեն հաշվետվությունում առաջարկվող բոլոր մեղմող միջոցառումները: Համաձայն ՇՄԱԳ-ի՝ բացասական ազդեցություններն առաջանում են հիմնականում շինարարության փուլում: Շահագործման փուլում, ակնհայտ է դրական ազդեցությունը, որն է՝ էկոլոգիապես ավելի անվնաս և հուսալի

Էներգիայի մատակարարում:

Արևակայանի կառուցման ազդեցությունը (գնահատման 0-5 ցուցանիշներով) շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կարելի ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Շրջակա միջավայր	Հավանակա ն ազդեցությու նը/A/	Ազդեցությա ն հետևանքը/ B/	Ազդեցության գնահատումը/A*	Ազդեցությ ան աստիճանը
Շինարարության փուլ				
1.Օդային ավազան	1	0	0	ցածր
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.Հողային ռեսուրսներ	2	1	2	միջին
4. Կենսաբազմազանություն	1	1	1	ցածր
5.Լանդշաֆտ	1	1	1	ցածր
6.Սոցիալական	0	0	0	դրական
Շահագործման փուլ				
1.Օդային ավազան	0	0	0	չունի
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.հողային ռեսուրսներ	1	1	1	ցածր
4. Կենսաբազմազանություն	0	0	0	չունի
5.Լանդշաֆտ	1	1	1	ցածր
6.Մարդու առողջություն և անվտանգություն	0	0	0	չունի

15. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Գործունեության իրականացման ենթակա տարածքը ներառում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Զովաբեր գյուղի վարչական տարածքը: Գործունեությունն իրականացվելու է Զովաբեր գյուղի բնակելի տարածքից դուրս:

Նախատեսվում է 5ՄՎտ դրվածքային հզորության ֆոտովոլտային արևակայանի կառուցում, իր ենթակառուցվածքներով:

Արևային ֆոտովոլտային կայանը արևային էլեկտրաէներգիայի լուծումներով էներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան կերպափոխելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գներով էլեկտրաէներգիայի սպառում:

Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության «Մինչև 2040 թվականը ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի» արևակայանների զարգացման (II. էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթությունները), ինչպես նաև էներգետիկայի զարգացման վերաբերյալ ուղեցույցների պահանջներին համապատասխան: Միաժամանակ պահպանելով ՀՀ կառավարության՝ 2000 թվականի մայիսի 18-ի «1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնների» N 249 և 1998 թվականի մայիսի 26-ի «էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը» N313 որոշումների պահանջները և գործող սանիտարահամաճարակաբանական կանոնների ու նորմերի որոշման պահանջները: Կառուցման բոլոր տարրերը պետք է համապատասխանեն ազգային ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգի (ՏԿ)-ի պահանջներին:

Նախատեսվող գործունեությունն իրականացնելիս հաշվի են առնվել նաև 2006 թվականի դեկտեմբերի 21-ի ՀՀ կառավարության N1943-Ն որոշմամբ հաստատված՝ «էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգի VIII բաժնի պահանջները և ցուցումները՝ գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության աստիճանը նվազեցնելու նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, ենթակառուցվածքների փոփոխություններ չի առաջանալու: Կատարվելու են միայն հողային աշխատանքներ:

Գործունեության տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ կայանից մոտ 200-600մ հեռավորության վրա գործում է այլ արևային կայան: Տարածքն օգտագործվել է որպես արոտավայր, հողային ծածկույթն արդեն իսկ ենթարկելով էրոզիայի: Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ: Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու արևային կայանի, ենթակայանի կառուցման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի՝ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ, իսկ շահագործման փուլում՝ կայանի անվտանգ շահագործման հետ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է

շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնց ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

15,1 Շինարարության փուլ

15.1.1 Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով.

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շինարարության ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կկատարվի փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները կփակվեն անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերը կպահվեն ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

15.1.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է .

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ.

«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում կձեռնարկվեն միջոցներ ուղղված՝ բուսահողի որակական հատկանիշների վատթարացմանը նբացառմանը:

- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է առանձին,

- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված

հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն,

- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կկուտակվի տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,

- արևային կայանի կառուցման աշխատանքների ժամանակ հանվող հողային զանգվածը կկուտակվի անմիջական հորատանցքերի հարևանությամբ՝ ծածկված վիճակում,

- հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար,

- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,

- շինարարության ընթացքում կօգտագործվեն գոյություն ունեցող գրունտային ճանապարհները,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կկայանել գրունտային ճանապարհի վրա,

- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կկատարվի գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:

15.1.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու, նպատակով նախատեսվում է.

- գործունեության իրականացման ընթացքում աշխատողների համար կմատակարարվի խմելու որակի ջուր՝ բերովի(շէերով),

- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների բետոնախառնիչ մեքենաներով՝ ըստ պահանջի :

Կեղտաջրեր. Աշխատողների կենցաղային կենցաղային կարիքների համար կտեղադրվի բիոզուգարան:

Մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

15.1.4 Կենսաբազմազանություն.

Գործունեության իրականացման ընթացքում բուսական և կենդանական աշխարհին հնարավոր ազդեցություններից զերծ պահելու համար նախատեսվում է.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները և տեղեկացնել համապատասխան գերատեսչություններին, «Սևան»ԱՊ-ին,

- գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով,

- բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել հատուկ պահպանման գոտում,

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.

- Արևային կայանի, ճոպանականգնակների վրա հակաթռչնային արգելափակոցների տեղակայում՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,

- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

15.1.5 Թափոններ

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- Արևային կայանի կառուցման տարածքում խուսափել վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների կուտակումից,

- նյութերի մնացորդները (մետաղական մասեր, մետաղալարեր, ներկեր և այլն) Կապալառու կազմակերպության կողմից հավաքել հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո տեղափոխել, անհրաժեշտության դեպքում հանձնել համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին, դրանց

հետագա վերամշակման և օգտագործման համար,

- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնի մնացորդներ, կհավաքվեն պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- կենցաղային աղբը հավաքել պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխել աղբավայր համայնքապետարանի համաձայնությամբ,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնել թափոնների ջերմային վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնել կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխել աղբավայր:

15.1.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են հուշարձանների կամ հնագիտական շերտի ի հայտ գալու դեպքեր, դրանց պահպանությունն ապահովելու համար, ընկերությունն առաջնորդվելու է պատահական գտածոյի ընթացակարգով: Պատահական գտածոյի ընթացակարգը ներառում է.

- Գտածոյի տեղամասում անմիջապես կանգնեցնել բոլոր աշխատանքները,
- Տեղեկացնել տեղական իշխանություններին և մշակույթի նախարարության
- Գտածոյի բնորոշումը պետք է իրականացվի լիազոր մարմնի պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչության կողմից,
- Հայտնաբերված իրերի հետ կապված հետագա քայլերը որոշվում են պատասխանատու մարմինների կողմից, այդ թվում դրանց տեղափոխման և պահպանման հարցը,
- հնագիտական շերտի կամ որևէ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան լիազոր մարմնին:

Շինարարական աշխատանքները կարելի է վերսկսել միայն մինչև համապատասխան պետական մարմնի (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը) կողմից թույլտվության տրամադրումը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

15.1.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և շինարարական տեխնիկական օգտագործել միայնսարքին վիճակում,

- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցները, տրանսպորտային միջոցների շարժիչները,

- Արևային կայանի և դրանց տարրերի անցկացման ժամանակ հաշվի առնել տարածքի կլիմայական պայմանները՝ քամու ճնշումը, սառցակեղևի շերտի հաստությունը, օդի ջերմաստիճանը, հաղորդալարերի և մետաղաձուլանների պարբերությունը:

15.1.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովել հրդեհաշիջման վահանակով՝ 2 հատ, հակահրդեհային կրակմարիչներով՝ 6հատ, տեղադրվելու են $2մ^3$ և $16մ^3$ ծավալներով 2 հատ ջրի բաքեր,

- աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն,
- տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,

- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- բացառել հենասյուների տեղադրումը սողանքային հատվածներում,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել,

- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

15.1.9 Մարդու առողջություն, Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. Գործունեության իրականացման ընթացքում մարդու առողջության և անվտանգության պահպանման, աշխատանքի ճիշտ կազմակերպման համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- արտադրական հրապարակն ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով,

- աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին,
- մալուխային գծերի տեղադրումը կատարել, բացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների առաջացումը,
- շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության սարքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ,
- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառելով մեքենաների կուտակումները,
- նվազագույնի է հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- աշխատողներն ապահովել համապատասխան բանվորական հագուստով: Շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԼԿ-3-480* նորմերի:

15.1.10 Սոցիալական.

Գործունեության իրականացման ընթացքում սոցիալական խնդիրներից խուսափելու նպատակով նախատեսվում է.

- բացառել գործունեության տարածքից դուրս այլ տարածքների օգտագործումը,
- աշխատանքները կազմակերպել ցերեկային ժամերին, նվազագույնի են հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- կարգավորել մեքենաների երթերի հաճախականությունը՝ ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

Գործունեության իրականացման շինարարության փուլում բացվելու են նոր աշխատատեղեր:

15.1.11 Բարեկարգում և Լանդշաֆտ.

Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի վրա էական վնասակար ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում է.

- բացառել նախատեսված նախագծից դուրս կառուցապատման այլ աշխատանքները, լանդշաֆտային այլ փոփոխությունները,
- հնարավորինս պահպանել ռելիեֆի բնական ձևերը, բնահողի բնական վիճակի պահպանման պահանջները, նվազագույնի հասցնել ռելիեֆի խախտմանը, կանաչ տարածքների վնասմանն, աղտոտմանն ուղղված գործողությունները,
- գործունեության տարածքը մաքրել թափոններից, վերականգնել լանդշաֆտը:
Բարեկարգում. շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.
- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրել ավելորդ թափոններից և բերելով հնարավորինս նախկին տեսքի,
 - շինարարական սարքավորումներն ապամոնտաժել և հեռացնել տարածքից,
- կատարել գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- մաքրվելու են պանելների մակերևույթները,
- արևակայանի և ենթակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է:

15.2 Շահագործման փուլ.

Շրջակա միջավայրի հնարավոր ազդեցությունների մեղման կամ կանխարգելման նպատակով նախատեսվում է .

15.2.1 Օդային ավազան. Շահագործման փուլում օդային ավազանի վրա հնարավորազդեցություն չի կանխատեսվում:

15.2.2 Ջրային ռեսուրսներ.

Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է.

- աշխատողների համար խմելու ջուրը բերել պատրաստի վիճակում՝ շշերով,
- աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները հոգալու նպատակով կտեղադրվի բիոզուգարան,
- բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- արևային կայանի պանելների մաքրումը կկատարվի բերովի տեխնիկական ջրով՝ պայմանագրային հիմունքներով, որի համար կտեղադրվի 500լ տարողության փակբաք:

15.2.3 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.

- հնարավորինս պահպանել գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,
- Արևային կայանի կառուցման ավարտից հետո՝ իրականացնել մշտական օգտագործման համար տրամադրվող հողերի վերականգնում:

15.2.4 Թափոններ.

Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է.

- կառուցել 1 հատ յուղընդունիչ (հոր)՝ տրանսֆորմատորից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է մետաղական՝ խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,

- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,

- հալոգեններ, դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,

- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին,

- յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 6x3մ չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վազոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ և պարբերաբար պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.2.5 Արտակարգ իրավիճակներ.

Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- արևակայանն ապահովվել հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, արտաքին լուսավորության հենասյուներով,
- ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներով, ենթակայանի տարածքում՝ 1 հատ հրդեհաշիջման վահանակով, 1 հատ հաշվառքի կետում և 1 հատ մուտքի մոտ,
- առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով,
- պարբերաբար ստուգվելու են աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը,
- գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Տեխնածին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարահանմանը:

15.2.6 Աղմուկ և թրթռում.

Արևակայանի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու և աղմուկի մակարդակը չի կարող ազդեցություն ունենալ բնակավայրերի վրա, ուստի միջոցառումներ չեն նախատեսվում:

15.2.7 Աշխատանքի կազմակերպում և մարդու անվտանգություն.

Արևակայանի, ենթակայանի անվտանգության գոտու ապահովումը նախատեսված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն:

Տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման փուլում նախատեսվում է նաև.

- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:

Էլեկտրահաղորդման գծերի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:

15.2.8 Սոցիալական.

Շահագործման փուլում գործունեության իրականացումն ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն՝ բացվելու են նոր աշխատատեղեր՝ 4-6 աշխատողների համար:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքին, մասնակցել համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների վերանորոգման, լուսավորության բարեկարգման աշխատանքներին և այլն:

Ձեռնարկողը պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել համայնքին, վերջինիս հետ փոխադարձ համաձայնությամբ ճշտել համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները:

16. Մոնիթորինգ.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու և վերահսկելու նպատակով իրականացվող գործընթաց է, գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումների կիրառման հսկողություն,
- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- աշխատողների իրազեկում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
 - անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով մշտական մոնիթորինգի իրականացում՝ 2 աշխատողի միջոցով,
 - տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
 - շինարարական և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանում,
 - շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումների իրականացում՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառելու նպատակով,
 - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարել շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված

լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,

- բարեկարգման աշխատանքների իրականացման ապահովում:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են կայանի շինարարության և շահագործման ծախսերում: Նախատեսվում է բնապահպանական միջոցառումների կիրառման համար տրամադրել տարեկան 200 000 դրամ:

18. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է ՇՄԱԳ հաշվեկշիռությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը

Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Շինարարության փուլ Օդային ավազան	<p>Օդային ավազան արտանետումները մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -Մթնոլորտային օդի պահպանության մասին Օրենքով սահմանված միջոցառումների իրականացում, -շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավեցում, ճանապարհների ջրցան՝ ըստ անհրաժեշտության: Ջրցանը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին օրվա դրական ջերմաստիճանի դեպքում, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, -տարածքում նուրբերը պահվելու են ծածկված 	Կապալառու	<<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ

		վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, -շինարարական տեխնիկան և		
--	--	--	--	--

	Շահագործման փուլ	<p>տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p> <p>Շահագործման փուլում օդային ավազանի վրա ազդեցություններ չեն նախատեսվում:</p>		
2	<p>Հողային ռեսուրսներ</p> <p>Շահագործման փուլ</p>	<p>Շինարարական աշխատանքների կատարման տարածքում հողաբուսաշերտը նախատեսվում է կառավարել համապատասխան կառավարության որոշման դրույթների համապատասխան:</p> <p>ընկերության կողմից հնարավորինս կպահպանվեն գործունեության վայրում՝ ազատ տարածքում խոտածածկ հատվածները,</p> <p>-Արևային կայանի կառուցման ավարտից հետո՝ մշտական օգտագործման համար տրամադրվող հողերի վերականգնում:</p>	Կապալառու	<<ՆԱՎԻԳ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ

		<p>- ճանապարհի ջրցանք և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,</p> <p>- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա, հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով,</p> <p>- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու են գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում:</p>		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Շինարարության ընթացքում տեխնիկական ջրի/ջրցան/ պահանջը կբավարարվի ջրցան մեքենաների միջոցով, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով շէրով,</p> <p>- ճանապարհների ջրցանն իրականացվելու է տարվա չոր եղանակներին՝ ըստ պահանջի,</p> <p>- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի:</p>	Կապալառու	<<ՆԱՎԻԳ>> ՍՊԸ

	<p>Շահագործման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> - Շինարարության փուլում աշխատողների համար նախատեսվում է տեղադրել բիոզուգարան: Ջրային ռեսուրսների պահպանման համար նախատեսվում է. -աշխատողների համար խմելու ջուրը կբերվի պատրաստի վիճակում՝ շշերով, -աշխատողների կենցաղային և սանիտարական կարիքները կհոգան սանիտարական հանգույցից (բիոզուգարան), -բիոզուգարանի մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: -կտեղադրվի 500լ տարողության փակ բաք: 		
--	-------------------------	--	--	--

4	Կենսաբազմազանություն	<p>Արևային կայանի կառուցման տարածքում գերակշռում են հացազգիները և տարախոտային բուսականությունը: Տարածքն անտառածածկ չէ: Բացակայում են ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակները:</p> <p>Տարածում կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաժեշտությունից ելնելով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - մշակվել գործողությունների պլան, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից, - ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ 		
---	----------------------	---	--	--

	Շահագործման փուլ	<p>ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար:</p> <p>Կենդանական աշխարհին չվնասելու համար նախատեսվում է.</p> <p>-հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:</p>		
--	------------------	---	--	--

5	<p>Թափոններ</p> <p>Շահագործման փուլ</p>	<p>Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որի համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները կփոխանցվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար, -շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն կտեղափոխվեն և կտեղադրվեն համայնքի կողմից հատկացված վայրում, -շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու են կենցաղային աղբի հետ և տեղափոխվելու են աղբավայր, - Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է. - կառուցվելու է 1 հատ յուղընդունիչ (հոր) յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչը լինելու է երկաթբետոնի հիմքով, խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ, - հնարավոր վթարների դեպքում 	Կապալառու	<<ՆԱՎԻԳ>> ՍՊԸ
---	---	--	-----------	---------------

		<p>յուղընդունիչում հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,</p> <ul style="list-style-type: none"> - հալոգեններ, դիֆենիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, - հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորներ, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը, - ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդները հանձնվելու է ասֆալտապատող ընկերություններին, - յուղերով աղտոտված ավազը հանձնվելու է մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով, - սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: - Արևակայանի շահագործման ընթացքում 		
--	--	--	--	--

		առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ շենքում՝ վազոն տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:		
--	--	--	--	--

	<p>Արտակարգ իրավիճակներ</p>	<p>Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել հակահրդեհային նորմերը, նախատեսվող գործունեության վայրն ապահովել հրդեհաշիջման վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեղադրվելու է 2 հատ ջրի բաքեր, - աշխատակիցներին նախապատրաստել արտակարգ իրավիճակներում գործելուն, - տարածքն ապահովել առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով, հեղուկ նյութերը կտեղափոխվեն շինարարական հարթակ օգտագործումից առաջ և կպահվեն հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - բացառել հենասյուների տեղադրումը սողանքային հատվածներում, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել, - տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման սարքերը, ապահովելով վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը: 		
--	-----------------------------	---	--	--

	<p>Շահագործման փուլ</p>	<p>Արտակարգ իրավիճակները կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - արևակայանն ապահովված է լինելու հրդեհաշիջման միջոցներով, տեսահսկման տեսախցիկներով, բարձրությամբ արտաքին լուսավորության հենասյուներով, - ազդանշանային համակարգերով, անվտանգության նշաններով, ենթակայանի տարածքում հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, իսկ արևային կայանում՝ կրակմարիչներով, - առաջին բուժօգնության անհրաժեշտության դեղարկղիկով, - պարբերաբար ստուգվելու են աղետներին հակազդելու համակարգերի աշխատունակությունը, - գործունեության տարածքում փակցվելու են արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: <p>Տեխնաձին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառվելու են միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը, վտանգավոր տարածքից մարդկանց տարհանմանը:</p> <ul style="list-style-type: none"> - անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու նպատակով նախատեսվում է, մշտական մոնիթորինգ, հերթափոխային գրաֆիկով՝ 2 աշխատողի 		
--	-------------------------	---	--	--

		<p>միջոցով:</p> <ul style="list-style-type: none">- տարերային աղետների (քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք) և վթարների դեպքում անջատել էլեկտրասնուցման, էլ էլեկտրահաղորդակցության սարքերը, ապահովել վտանգավոր տարածքից մարդկանց տարահանումը:		
--	--	---	--	--

	<p>Պատմամշակութային հուշարձաններ</p>	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:</p>		
--	--------------------------------------	--	--	--

7	<p>Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն</p>	<p>Գործունեության իրականացման շինարարության ընթացքում հնարավոր են աշխատողների հետ կապված վնասվածքներ, որի համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - արտադրական հրապարակն ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, - աշխատողների համար հատկացնել ընդհանուր ծառայությունների տարածք՝ հանգստի և անձնական հիգիենայի կարիքները հոգալու համար(տնակ), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, - մալուխային գծերի տեղադրումը կատարել քացառելով մալուխային գծերի հավաքակցման և շահագործման գործընթացում վտանգավոր մեխանիկական լարումների և վնասվածքների 		
---	---	---	--	--

	<p>առաջացումը,</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովել հակահրդեհային միջոցներով, լուսավորության արքերով՝ գիշերային տեսանելիության հնարավորությամբ, - հեղուկ նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - ապահովել շինարարական նյութերի, վառելիքի, նավթամթերքի պահեստավորման և բեռնաթափման կանոնների համապատասխանությունը գործող օրենսդրության պահանջներին, վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելունպատակով, - աշխատողներին ապահովել համապատասխան բանվորական հագուստ, շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են ՀՀ 		
--	---	--	--

